ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«2026 ԹՎԱԿԱՆԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

1. Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմ	
Չի ներկայացվել	
2. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
3. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
4. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
5. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
6. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	
7. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով	
Չի ներկայացվել	

8. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի Պետական–իրավական հարցերի մշտական հանձնաժողով		
Չի ներկայացվել		
9. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով		
Չի ներկայացվել		
10. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողով		
Չի ներկայացվել		
11. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով		
Չի ներկայացվել		
12. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով		
Չի ներկայացվել		
13. Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման ազգային ժողովի հաշվիչ հանձնախումբ		
Չի ներկայացվել		
14. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով		**08.07.2025թ.** **ԱԺՀ.12/3145-2025**
4. «1.4.1 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏՈՒԺԻ ԹԵՐՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ» բաժնում՝ Ծածկագիր 141012 «15-29տ. երիտասարդների թվաքանակն աշխատանքի շուկայում» վիճակագրական աշխատանքի անվանումը համապատասխանեցնել Հբաղվածության 2025-2031 թվականների ռազմավարական ծրագրով	**1.Չի ընդունվել:** Աշխատանքի վիճակագրության շրջանակում երիտասարդության տարիքային խմբի ընդգրկվածության սահմանափակումը կհանգեցնի երիտասարդության աշխատանքի	

սահմանված տարիքային շեմին, այն է՝ 18-29 տարեկան.	շուկայում վարքագծի, փաստացի իրավիճակի թերարձանագրման: Թեպետ ազգային օրենսդրությամբ մինչև 18 տարեկան անձանց աշխատանքը կարող է սահմանափակվել, վիճակագրական և քաղաքական տեսանկյունից կարևոր է ներառել նաև 15–17 տարեկաններին՝ անկախ նրանից. նրանք սովորում են, ունեն ոչ ֆորմալ զբաղվածություն, թե գործազուրկ են (փաստացի, բայց պաշտոնապես չգրանցված): **15-29 տարիքային խմբի կիրառման առանցքային հիմնավորումներն են.** • համապատասխանում է Աշխատանքի միջազգային կազմակերպության ստանդարտներին և Կայուն զարգացման նպատակների 8.5.2 և 8.6.1 ցուցանիշների հաշվարկման գլոբալ մեթոդվյալների պահանջներին (օր.՝ երիտասարդների գործազրկություն, կրթություն կամ ուսուցում չստացող, զբաղվածություն չունեցող երիտասարդներ (NEET)), • երկրների միջև համադրելիությունն ապահովելու համար ազգային վիճակագրությունները պետք է հետևեն վերոնշյալ ստանդարտներին, • մինչ չափահասության տարիքը, մի շարք կարևոր անցումներ տեղի են ունենում **մինչև**

	18 տարեկանը՝ դպրոցից դուրս մնալ, ոչ ֆորմալ աշխատանք և այլն, • **15-17 տարեկանների բացառումը** որոշակիորեն կքողարկի պատկերը՝ թե ինչպես է տեղի ունենում դպրոցից աշխատաշուկա անցումը. • օգնում է բացահայտել խոցելի խմբերին և ապահովում ավելի նպատակային քաղաքականություն, • տեղեկություն է տալիս երիտասարդության ընթացքի երկարաժամկետ վերլուծության համար՝ 15-ը վաղ երիտասարդության ելակետային տարիքն է, որն անհրաժեշտ է աշխատանքի շուկա անցման փուլերի հետագիծը մշտադիտարկելու համար:
2. «5.2 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» բաժնում՝ 1) Ծածկագիր 520009 և 520010-ում «Հոգեկան և վարքի խանգարում ունեցող անձինք» բառերը փոխարինել «Հոգեկան առողջության և վարքային խնդիր ունեցող անձինք» բառերով.	**2. Չի ընդունվել:** **1)** «Հոգեկան և վարքի խանգարում» ձևակերպումը համապատասխանում է ներկայում հիվանդությունների դասակարգման համար կիրառվող համապատասխան միջազգային դասակարգչի հենքով մշակված «Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչի» (այսուհետ՝ ՀՄԴ10) V գլխի

	խորագրով և դրա ներքո ներկայացված հիվանդությունների վերաբերյալ համապատասխան ձևակերպումներին, այն է՝ ոչ թե «հոգեկան առողջության և վարքային խնդիր»՝ այլ «հոգեկան և վարքի խանգարում»:
2) Ծածկագիր 520011-ում «Ալկոհոլիզմով, թմրամոլությունով, թունամոլությունով հիվանդներ» բառերը փոխարինել «Ալկոհոլից, թմրանյութերից, խաղամոլությունից կախվածություն ունեցող անձինք և թունամոլությունով հիվանդներ» բառերով.	**2)** Արմստատի համար առողջապահության ոլորտի տեղեկությունների ստացման աղբյուրը Առողջապահության նախարարության (ԱՆ) կողմից վարվող համապատասխան վարչական ռեգիստրի տվյալներն են և նշված աղբյուրից Արմստատին հասանելի չեն «խաղամոլությունից կախվածություն ունեցող» անձանց վերաբերյալ ամփոփ տվյալներ: Նշված տվյալները բացակայում են նաև Առողջապահության ազգային ինստիտուտի կողմից հրապարակվող «Առողջություն և առողջապահություն» տարեգրքում (տե՛ս հղման ներքո): Ըստ այդմ, առողջապահության հատվածի վերաբերյալ պաշտոնական վիճակագրության հրապարակումների շրջանակում հնարավոր չէ խնդրո առարկա ցուցանիշի ներառումը, ինչով էլ պայմանավորված նպատակահարմար չէ խնդրո առարկա ծածկագրով նախատեսված աշխատանքի անվանման փոփոխությունը՝

	բովանդակային անհամապատասխանության բացառման նպատակով: Միաժամանակ, հարկ է նշել, որ խաղամոլությունից կախվածություն ունեցող անձանց վերաբերյալ խնդրո առարկա տեղեկությունների հնարավոր աղբյուր **կարող է հանդիսանալ** նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՍՀՆ), պայմանավորված այն հանգամանքով, որ համաձայն «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով սահմանված դրույթների՝ ԱՍՀՆ-ն համակարգում է ռեաբիլիտացիոն ծրագրեր, այդ թվում միտված խաղամոլությունից ձերբազատմանը: Ըստ այդմ, հնարավոր վարչական աղբյուրներում նման տվյալների առկայության բացահայտման և որոշակի հաճախականությամբ ԱՍՀՆ-ի կողմից Արմստատին դրանց հասանելիության ապահովման պարագայում, Արմստատը պատրաստակամ է դիտարկել դրանց՝ վիճակագրական ծրագրերի համապատասխան աշխատանքներում ներառելու վերաբերյալ հարցը: Հետևաբար, առաջարկվում է խնդրո

	առարկա վարչական տեղեկությունների ԱՍՀՆ-ում հնարավոր առկայության վերաբերյալ հարցը նախևառաջ քննարկել ԱՍՀՆ-ի հետ:
3. «5.3 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ» բաժնում՝ 1) Ծածկագիր 530006-ում «Մանկատների գործունեություն» բառերը փոխարինել «Երեխաների խնամքի հաստատությունների գործունեությունը» բառերով.	**3. Ընդունվել է ի գիտություն:** **1)** Արմստատի կողմից «Մանկատների գործունեություն» խորագրով պաշտոնական հրապարակումն իր բովանդակությամբ վերաբերվում է ՀՀ-ում գործող մանկատներին: Մինչդեռ, առաջարկվող «Երեխաների խնամքի հաստատությունների» գործունեությունը տարբերվում է մանկատներից: Սակայն, Արմստատի և ԱՍՀՆ-ի աշխատակիցների միջև խնդրո առարկայի շուրջ իրականացված աշխատանքային քննարկումների արդյունքում պարզվել է, որ ԱՍՀՆ-ի կողմից վարվող համապատասխան վարչական ռեգիստրից Արմստատին կարող են տրամադրվել նաև խնդրո առարկա հաստատությունների գործունեության վերաբերյալ ամփոփ տվյալներ: Հաշվի առնելով նշվածը, սույն առաջարկության մասով Արմստատը գրությամբ դիմել է ԱՍՀՆ-ին, որին ի պատասխան ԱՍՀՆ-ն իր հերթին խնդրո առարկա 530006 ծածկագրում առաջարկել է «Մանկատների գործունեություն» բառերը

	փոխարինել «Բնակչության պաշտպանության հաստատությունների գործունեություն» բառերով: Սակայն, մինչ նշվածի իրականացումն անհրաժեշտ է, որպեսզի հստակեցվեն խնդրո առկա տեղեկությունների ներկայացման ձևաչափերը, դրանցում ներառվելիք ամփոփ ցուցանիշների կազմն ու մեթոդաբանությունը, ինչպես նաև այդ տեղեկությունները ԱՍՀՆ-ի կողմից Արմստատին ներկայացման հաճախականության հետ կապված հարցերը: Նշվածի շուրջ դիրքորոշումների հստակեցման և ամբողջական համաձայնեցման գալու պարագայում նոր միայն Արմստատը կարող է խնդրո առարկա ծածկագրում իրականացնել համապատասխան փոփոխություններ:
2) Ծածկագիր 530010-ին ի լրումն՝ նաև ձևավորել վիճակագրական տվյալներ մինչև 6 տարեկան երրորդ և հաջորդ երեխաների համար տրվող դրամական աջակցության վերաբերյալ տեղեկություն.	**2)** «Ծնված կարգաթվով երրորդ և հաջորդ երեխաների՝ մինչև 6 տարեկանը լրանալը հատկացվող դրամական աջակցության» վերաբերյալ տեղեկությունների առնչությամբ Արմստատը դիմել է ԱՍՀՆ-ին՝ իր կողմից վարվող համապատասխան վարչական ռեգիստրից հնարավոր մանրամասնությամբ ամփոփ տվյալներ ստանալու և հրապարակելու ակնկալիքով: Սակայն ԱՍՀՆ-ն խնդրո

	առարկայի շուրջ Արմստատին տեղեկացրել է, որ նշվածի հետ կապված ՀՀ կառավարության 23.12.2021թ.-ի թիվ 2169-Լ որոշմամբ հաստատված կարգավորումները տարածվում են մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ը ծնված երեխաների վրա: Ըստ այդմ, ԱՍՀՆ-ն նպատակահարմար է գտել խնդրո առարկա տվյալների հավաքման հարցին անդրադառնալ ավելի ուշ՝ ՀՀ կառավարության վերը նշված որոշման մեջ փոփոխությունների իրականացումից հետո, որով կսահմանվեն նաև 2026թ.-ին հաջորդող ժամանակահատվածում ծնված երեխաների դրամական աջակցության ցուցաբերման հետ կապված հնարավոր կարգավորումները:
15. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի աշխատակազմ	
Չի ներկայացվել	
16. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ	**31.07.2025թ.** **02/08.86/19656-2025**
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ 1.Նախագծով նախատեսվում է տեսչական մարմինների կողմից վիճակագրական տվյալների տրամադրում Վիճակարգական կոմիտեին, մասնավորապես՝ հայտնաբերված վարչական իրավախախտումները և	**1.Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

վարչական պատասխանատվության ենթարկված անձանց թվաքանակը, թափուր աշխատատեղերը, աշխատողների թվաքանակը, աշխատատեղերի շարժը և այլն: Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնից որևէ վիճակագրական տվյալի տրամադրում Նախագծով սահմանված չէ: Բացի այդ, ոչ բոլոր տեսչական մարմիններից է պահանջվող տեղեկատվությունը նույնական: Հետևաբար, հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկվում է Նախագծով բոլոր տեսչական մարմինների համար նույնականացնել Վիճակագրական կոմիտեին տրամադրվող տեղեկատվության ծավալը:	
2.Բացի այդ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Կրթության բնագավառի տեսչական վերահսկողության մասին» օրենքի ընդունմամբ Կրթության տեսչական մարմինը լիազորված է վերահսկողություն իրականացնել նաև արտադպրոցական կրթության ոլորտում, առաջարկվում է Նախագծում ընդգրկել նաև Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից Վիճակարգական կոմիտեին ներքոնշյալ տվյալների տրամադրումը. ✓ Հայաստանի Հանրապետությունում գործող արտադպրոցական ուսումնական հաստատությունների քանակը, ✓ այդ հաստատություններում աշխատող մանկավարժական աշխատողների ընդհանուր թիվը, ✓ հաստատություններ հաճախող սովորողների ընդհանուր թիվը:	**2.Չի ընդունվել:** Արմստատը, համաձայն վիճակագրական ծրագրերի, արտադպրոցական ուսումնական հաստատությունների քանակի, դրանցում աշխատող ուսուցիչների և հաստատություններ հաճախող աշակերտների թվաքանակի վերաբերյալ արդեն իսկ հրապարակում է որոշակի տվյալներ: Նշվածը մասնավորապես վերաբերում է երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների և սպորտային կազմակերպությունների գործունեությանը (վերջին հրապարակումները տե՛ս https://armstat.am/file/article/sv_02_25a_530.pdf

	և https://armstat.am/file/article/sv_06_25a_5140.pdf հղումների ներքո): Սակայն հարկ է նշել, որ նշված հաստատությունների վերաբերյալ տեղեկությունների ամբողջականացման համար կիրառելի լավագույն տեղեկատվական աղբյուրը, ինչպես նշված է առաջարկության մեջ, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) կողմից համապատասխան ոլորտային վարչական ռեգիստրների տեղեկություններն են: Մինչդեռ, ԿԳՄՍՆ-ի կողմից 01.09.2025թ.-ի թիվ 01/21/28352-2025 գրությամբ Արմստատին ներկայացված պարզաբանումների համաձայն՝ ներկայում ԿԳՄՍՆ-ի կողմից իրականացվում են արտադպրոցական ոլորտի կազմակերպությունների գործունեությանն առնչվող տեղեկության թվայնացման աշխատանքներ և ըստ այդմ խնդրո առարկային վերաբերող ամբողջական տեղեկություններ դեռևս առկա չեն: Հետևաբար, տվյալ առաջարկության համատեքստում ամբողջական վարչական հաշվառումները գտնվում են ԿԳՄՍՆ-ի իրավասությունների տիրույթում, որոնց արդյունքներով ձևավորվելիք ամփոփ տեղեկություններին

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ 3.Նախագծով նախատեսվում է, որ ՀՀ վիճակագրության պետական խորհուրդը **նորմատիվ բնույթ** կրող ենթաօրենսդրական իրավական ակտով հաստատելու է 2026 թվականի վիճակագրական ծրագիրը, մինչդեռ չնայած այն հանգամանքին, որ օրենքով վերոնշյալ խորհրդին վերապահված է համապատասխան ծրագիրը հաստատելու իրավասություն, այնուամենայնիվ հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված այն մարմինների ցանկում, որոնք իրավասու են ընդունել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, վերոնշյալ խորհուրդն առկա չէ: Նշված հարցին անդրադառնալով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը արձանագրել է հետևյալը « (...) **ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը կարող են ընդունվել միայն Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կողմից,** այլ կերպ ասած, ենթաօրենսդրական ակտեր ընդունելու իրավասության հասցեատերերի ցանկը սպառիչ է. այդ մարմիններն են՝ Կառավարությունը (Սահմանադրության 153-րդ հոդվածի 3-րդ մաս), կառավարության անդամները (Սահմանադրության 152-րդ հոդվածի 4-րդ մաս), ինքնավար մարմինները (Սահմանադրության 122-րդ հոդվածի 3-րդ մաս), համայնքի ավագանին (Սահմանադրության 182-րդ հոդվածի 3-րդ մաս), Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (Սահմանադրության 194-րդ	հասանելիության հնարավորության ապահովման պարագայում, Արմստատը պատրաստակամ է վիճակագրական ծրագրերի շրջանակում տարածելու նաև վերը հիշատակված հրապարակումներում ներառվածից բացի լրացուցիչ այլ տեղեկություններ: **3.Ընդունվել է ի գիտություն:** Ներկայացված նույնաբովանդակ դիտարկման վերաբերյալ Արմստատը պարզաբանում է ներկայացրել «2025 թվականի վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ վիճակագրության պետական խորհրդի (ՀՀ ՎՊԽ) որոշման նախագծի ամփոփաթերթի 16-րդ կետի ներքո (տե՛ս՝ https://armstat.am/file/doc/99554118.pdf հղման 4-րդ էջը): Նշվածի առնչությամբ Արմստատը վերահաստատում է իր դիրքորոշումը և ըստ այդմ ներկայացված դիտարկումներն ընդունում ի գիտություն:

հոդվածի 2-րդ մաս), Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (Սահմանադրության 196-րդ հոդվածի 5-րդ մաս), Կենտրոնական բանկը (Սահմանադրության 200-րդ հոդվածի 5-րդ մաս) և Բարձրագույն դատական խորհուրդը (Սահմանադրության 175-րդ հոդվածի 3-րդ մաս):		
17. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակ		
Չի ներկայացվել		
18. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ		
Չի ներկայացվել		
19. Հայաստանի Հանրապետության սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ		
Չի ներկայացվել		
20. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ		**29.07.2025թ.** **//24737-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-	
21. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն		**04.08.2025թ.** **ԱԱ/19/24880-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-	
22. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն		**31.07.2025թ.** **01/16761-2025**
1. Նախագծի Մաս 1-ի «4. Արտաքին հատված» բաժնում նախատեսել նոր «Աշխատանքի (ցուցանիշի) ծածկագիր» վիճակագրական աշխատանքի (ցուցանիշի) հետևյալ անվանմամբ՝ «Ապրանքների վերաարտահանում»: Ընդգրկվածությունը՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքների	**1. Չի ընդունվել:** 2015թ.-ին ԵԱՏՄ-ին Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ պայմանավորված, Արմստատը վարում է ոչ	

անվանացանկի 4-նիշ մակարդակ, հաճախականությունն՝ ամսական, կատարման (մշակման) ավարտը (ամսաթիվը կամ օրը հաշվետու ժամանակաշրջանից հետո)՝ 35/36-րդ օրը, աշխատանքի արդյունքը՝ «տվյալների բազաներ»:	միայն արտաքին, այլ նաև փոխադարձ առևտրի վիճակագրություն: Ըստ այդմ, փոխադարձ առևտրի վարումը չի ենթադրում «վերաարտահանում» ընթացակարգի տարանջատում «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրի վիճակագրության վարման կանոններն ու փոխադրվող ապրանքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման» վիճակագրական ձևի մեջ, ինչով էլ պայմանավորված, հնարավոր չէ փոխադարձ առևտրում հաշվարկել «ապրանքների վերաարտահանում» ցուցանիշը, որի բացակայությունը էական է ընդհանուր «ապրանքների վերաարտահանում» ցուցանիշի ամբողջականության ապահովման համար: Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 19-ի թիվ 1354-Ն որոշմամբ (տե՛ս https://www.arlis.am/hy/acts/154638/latest հղման Հավելված N 10) Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) տվյալների բազան հասանելի է նաև Էկոնոմիկայի նախարարությանը (ԷՆ):

2. Նախագծի 4.1.36 կետի 3-րդ ենթակետը՝ «Օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ձեռնարկությունների գծով վիճակագրության վերաբերյալ հարցաթերթը» ներառվի որպես եռամսյակային պարբերականությամբ հաշվետվություն: Ներդրումային քաղաքականության ձևավորման ընթացքում անհրաժեշտ են հնարավորինս թարմ և դինամիկ տվյալներ՝ օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ գործող տնտեսավարողների, կազմակերպությունների մասին: Պահանջվող տվյալները կարևոր ռազմավարական գործիք են նաև ներդրումային ծրագրերի վերանայման և ՀՀ կառավարության ներդրումային քաղաքականության թիրախավորման համար: Եռամսյակային հաճախականությամբ հավաքագրվող տվյալները հնարավորություն կտան վերլուծել ներդրումային միջավայրի կարճաժամկետ փոփոխությունները՝ ըստ ճյուղերի և ոլորտների, ժամանակին արձագանքել ներդրումային ակտիվության նվազման միտումներին, գնահատել հնարավոր պատճառները և առաջարկել համապատասխան փոփոխություններ, համադրել և վերլուծել ներդրումային հոսքերը:	**2.Չի ընդունվել:** Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից ներկայացված հարցաթերթը չունի տարեկան պարտադիր լրացման պահանջ (վերջին անգամ Արմստատն այն ստացել է 2021թ.-ին), ինչով էլ պայմանավորված Նախագծում այն չի ներառվել: Բացի այդ, հարկ է նշել, որ Արմստատը,եռամսյակային հաճախականությամբ, ԷՆ-ին տրամադրում է օտարերկրյա ներդրումների ստացումները, մարումները և զուտ հոսքերը: Օտարերկրյա ներդրումների մասին տեղեկությունները հավաքվում են ոչ միայն օտարերկրյա հիմնադիրներով կազմակերպություններից, այլև ՀՀ ռեզիդենտներից, ովքեր ունեն օտարերկրյա ներդրումներով գործառնություններ: Այլ կերպ,օտարերկրյա ներդրումների վիճակագրությունը վարվում է ըստ ստացումների ու մարումների և ոչ թե ըստ հիմնադիրների,որոնց հաշվառումը վարչական գրանցումների խնդիր է:
3. Նախագծի 4.1.11 աղյուսակի (էջ 171) 4-րդ կետի անվանումը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «Բերքի արտադրության և անասնագլխաքանակի հարցաթերթ»:	**3. Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

4. Նախագծի Մաս 6-ի 75-րդ տողի 16) ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ տողում **նշված 10 օր ժամկետը** հակասում է ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի հունվարի 31-ի Ստանդարտացման, համապատասխանության գնահատման, հավատարմագրման և չափումների միասնականության ապահովման ոլորտներում տեղեկատվության փոխանակման աշխատանքները կազմակերպելու և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2015 թվականի օգոստոսի 25-ի թիվ 1196-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N129-Ա հրամանի 1-ին կետի 5-րդ ենթակետի պահանջին, որտեղ սահմանված է **15 օր ժամկետ**:	**4. Ընդունվել է ի գիտություն:** Սույն վիճակագրական հաշվետվության ձևում փոփոխություն կատարելու պարագայում Արմստատը նշված առաջարկությունը հաշվի կառնի:
5. «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության 5-անիշ դասակարգման» հրապարակման համապատասխան աղյուսակում լրացնել **կազմակերպությունների քանակի վերաբերյալ** տվյալներ:	**5. Չի ընդունվել:** Արդյունաբերության վերաբերյալ վիճակագրությունը վարվում է ոչ թե տնտեսավարող սուբյեկտների՝ որպես հաշվառման միավորի հիմնական տնտեսական գործունեության տեսակներով (ինստիտուցիոնալ կտրվածքով), այլ ըստ յուրաքանչյուր կազմակերպության կողմից փաստացի իրականացվող գործունեության տեսակներով (ֆունկցիոնալ կտրվածքով): Այսինքն՝ միևնույն տնտեսավարող սուբյեկտը տեղեկություն է տրամադրում իր կողմից իրականացված բոլոր արդյունաբերական բնույթի գործունեության տեսակների մասով, որոնք խմբավորվում և հրապարակվում են տնտեսական գործունեության տեսակների

	դասակարգչի (NACE, խմբ. 2) 5-նիշ մակարդակով: Ըստ այդմ, «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության 5-անիշ դասակարգման» վիճակագրական տեղեկագրում տնտեսավարող սուբյեկտների քանակի վերաբերյալ տեղեկության հրապարակումը նպատակահարմար չէ, քանզի կազմակերպությունների քանակի վերաբերյալ ցուցանիշը կներառի կրկնորդություններ (կրկնահաշվարկներ): Ավելին, արդյունաբերության վիճակագրությունում հաշվառման դաշտի ամբողջականության ապահովման նպատակով մշակող արդյունաբերության առանձին արտադրատեսակների գծով (հաց, միս, պանիր) իրականացվում է չդիտարկվող (չհաշվառվող) դաշտի գնահատում, այսինքն՝ այս մասով տնտեսավարող սուբյեկտից տեղեկության հավաքում չի իրականացվում, ինչով էլ պայմանավորված տնտեսավարող սուբյեկտների քանակն ամբողջական չէ:

6. Նախագծի 1.2.2 «Գյուղատնտեսություն, ձկնորսություն և պարենային ապահովություն» կետի 122002 աշխատանքի ծածկագրի շրջանակում տրամադրվող «Պտղատու այգիների, հատապտղանոցների (ներառյալ ջերմոցներ և ջերմատներ) և խաղողի այգիների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը» բաժնի մեջ պտուղ և հատապտուղների վերաբերյալ տեղեկատվությունը հնարավորության դեպքում ներկայացնել նաև ըստ առանձին հիմնական մշակաբույսերի և ըստ մարզերի, մասնավորապես հնդավորներ՝ խնձորենի, տանձենի, սերկևիլենի և այլ, կորիզավորներ՝ ծիրանենի, դեղձենի, նեկտարենի, սալորենի, բալենի և կեռասենի և այլ, ընկուզապտուղների՝ ընկուզենի, տխիլենի, նշենի, պիստակենի: Միաժամանակ, առաջարկվում է «Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքը» ներկայացնել նաև արժեքային արտահայտությամբ:	**6. Ընդունվել է:** Պտղատու այգիների տարածությունների, համախառն բերքի և միջին բերքատվության վերաբերյալ հայցվող կտրվածքով տեղեկություններ տրամադրելու համար անհրաժեշտ փոփոխություններ կկատարվեն վիճակագրական հաշվառման համապատասխան փաստաթղթերում, որոնցով հավաքված տվյալները կամփոփվեն և կհրապարակվեն «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը» վիճակագրական տեղեկագրում: Ինչ վերաբերում է գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքի արժեքային արտահայտությամբ ներկայացմանը, ապա դրանք Արմստատի կողմից տարեկան հաճախականությամբ կհրապարակվեն «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցում:

7. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» հատվածում հրապարակվող միջազգային և ներքին զբոսաշրջությանը, հյուրանոցային ծառայություններ մատուցող կազմակերպություններին առնչվող տեղեկատվությունից բացի տրամադրել նաև հետևյալ տեղեկատվությունը. *1)* ***Հյուրանոցային տնտեսության օբյեկտների (ՀՏՕ-ների) միջին տոկոսային զբաղվածությունը*** *(եռամսյակային կտրվածքով)՝ բաշխված* ➢ ըստ առանձին մարզերում ու ք.Երևանում հյուրանոցային տնտեսության օբյեկտների տեսակների, ➢ ըստ տեղացիների ու օտարերկրացիների (հնարավորության դեպքում նշելով նաև քաղաքացիությունը, սեռը, տարիքը), ➢ ըստ տեղացիների ու օտարերկրացիների կողմից ամրագրման տեսակների՝ զբոսաշրջային օպերատորի միջոցով, սոցիալական փաթեթի շրջանակներում, ինքնուրույն:	**7.** **1) Չի ընդունվել:** Հյուրանոցային տնտեսության օբյեկտների (ՀՏՕ) և զբոսաշրջային գործունեություն իրականացնող սուբյեկտների վերաբերյալ առաջարկվող մանրամասնեցմամբ ցուցանիշների ստացումը հնարավոր է բացառապես ֆոկուս (թիրախային) հետազոտությունների իրականացման արդյունքում, որի նպատակներն իրենց բնույթով վարչական են: Նման հետազոտությունների իրականացումը պահանջում է էական ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, ինչպես նաև բխում է ոլորտում ռազմավարություն մշակող և իրականացնող մարմնի խնդիրներից և նպատակներից, ինչը հնարավոր է այդ մարմնում վարչական ռեգիստրի առկայության պարագայում: Խնդրին համապարփակ մոտեցումը կստեղծի նաև նախադրյալներ վարչական լիազոր մարմնի կողմից կազմելու զբոսաշրջության սատելիտային հաշիվ, հնարավորություն

	ստեղծելով նաև հաշվարկելու զբոսաշրջության մասնաբաժինը ՀՆԱ-ում:
2) ***ՀՏՕ-ներում գիշերակացերի քանակ, մնալու միջին տևողություն,*** *(եռամսյակային կտրվածքով)՝ բաշխված՝* ➢ ըստ առանձին մարզերի և Երևան քաղաքի, ➢ ըստ հյուրանոցային տնտեսության օբյեկտների, ➢ ըստ տեղացիների ու օտարերկրացիների, ➢ ըստ ամրագրման տեսակների (զբոսաշրջային օպերատորի միջոցով, սոց փաթեթի շրջանակներում, ինքնուրույն):	**2) Չի ընդունվել:** Տե՛ս 7-րդ կետի 1-ին ենթակետի մեկնաբանությունը: Ի լրումն, զբոսաշրջիկների գիշերակացերի և մնալու միջին տևողության վերաբերյալ տեղեկությունները հրապարակվում են եռամսյակային հաճախականությամբ, ինչը վերաբերում է միայն ոչ ռեզիդենտներին և այն էլ՝ հանրապետության կտրվածքով, քանզի տեղեկությունների աղբյուրը ՍԷԿՏ համակարգն է:
3) Զբոսաշրջային գործունեության սուբյեկտների՝ *զբոսաշրջային օպերատորների ու զբոսաշրջային գործակալների, ինչպես նաև ներգնա, արտագնա և ներքին գործակալների* ***կողմից մատուցված ծառայությունների մասին տեղեկատվություն, այդ թվում՝*** ➢ *սպասարկված օտարերկրացիների (ըստ քաղաքացիության) և տեղացիների* քանակ՝ ըստ սեռի, տարիքի: ➢ Վաճառված ներգնա, ներքին և արտագնա զբոսաշրջային փաթեթների քանակ ➢ Ըստ վաճառված ներգնա և ներքին փաթեթների՝ միջին տևողություն/գիշերակացերի քանակ՝ ըստ օտարերկրացիների (նշելով քաղաքացիությունը և տեղացիների):	**3) Չի ընդունվել:** Տե՛ս 7-րդ կետի 1-ին ենթակետի մեկնաբանությունը:Միաժամանակ, զբոսաշրջային գործակալությունների, զբոսաշրջային օպերատորների գործունեության, տեղերի ամրագրման և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայությունների վերաբերյալ Արմստատն իրականացնում է վիճակագրական հաշվառում, որի վերաբերյալ տեղեկությունը եռամսյակային հաճախականությամբ հրապարակվում է «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական

➢ Հայաստանում առավել շատ այցելած վայրեր՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի, այցելավայրերի, ըստ տեղացիների և օտարերկրացիների (նշելով քաղաքացիությունը): ➢ Արտագնա այցելությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ ՀՀ քաղաքացիների կողմից այցելած երկրների (զբոսաշրջային փաթեթ կամ տոմս): ➢ ***4) Զբոսաշրջության ոլորտում ընդհանուր աշխատատեղերի մասին տեղեկատվություն (տարեկան կտրվածքով)՝*** ➢ *ըստ առանձին մարզերի և Երևան քաղաքի,* ➢ *ըստ առանձին գործունեության տեսակների (ՀՏՕ, զբոսաշրջային գործունեության սուբյեկտ, սննդի օբյեկտներ, զբոսաշրջային ուղևորափոխադրողներ, զբոսավարներ, այլ):*	ամսական զեկույցում (տե՛ս https://armstat.am/file/article/sv_06_25a_126.pdf հղման 53-րդ էջը): Ի լրումն, առավել մանրամասնեց-ված հայցվող տվյալների հաշվառման մեկնակետը պետք է լինի զբոսաշրջային սուբյեկտների լիցենզա-վորման հիման վրա ձևավորված վարչական ռեգիստրը, ինչն այս պահին բացակայում է: **4) Ընդունվել է:** Զբոսաշրջության ոլորտում աշխատատեղերի վերաբերյալ **վիճակագրական** ցուցանիշը տարեկան հաճախականությամբ (տարեկան կտրվածքով) կհրապարակվի «Աշխատանքի շուկան Հայաստանում» վիճակագրական ժողովածուում: Միաժամանակ, տեղեկացվում է, որ որպես ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանական հիմք, կկիրառվի ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության կողմից մշակված մեթոդաբանությունը (“Statistical Framework for Measuring the Sustainability of Tourism” endorsed by the UN Statistical Commission at its fifty-fifth session held from 27 February to 1 March 2024.)՝ տեղայնացված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի ենթադասերի ծածկագրերով:

5) Զբոսաշրջության ավելացված արժեքը ՀՆԱ-ում (տարեկան կտրվածքով):	**5) Չի ընդունվել:** Տե՛ս 7-րդ կետի 1-ին ենթակետի մեկնաբանությունը:
6) Զբոսաշրջության բնագավառում օտարերկրյա ներդրումների (ընդհանուր, այդ թվում՝ ուղղակի) մասին տեղեկատվություն:	**6) Չի ընդունվել:** Տե՛ս 7-րդ կետի 1-ին ենթակետի մեկնաբանությունը:
7) ՀՀ-ում գործող թանգարաններ, արգելավայրեր այցելությունների մասին տեղեկատվություն՝ բաշխված՝ ➢ ըստ տեղացիների և օտարերկրացիների (այդ թվում՝ ըստ քաղաքացիության, սեռի, տարիքի), ➢ ըստ զբոսավարի ծառայության (նաև՝ ըստ լեզվի պահանջի):	**7) Չի ընդունվել:** Խնդրո առարկա բաշխվածությամբ հայցվող տեղեկությունների վիճակագրական գործիքակազմերով հավաքումն Արմստատը ներկայում նպատակահարմար չի համարում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նշվածի մասով Արմստատին համապատասխան հաշվետվություններ ներկայացնող տնտեսավարող սուբյեկտների (ռեսպոնդենտներ) կողմից նախևառաջ պետք է վարվեն հայցվողի առնչությամբ համապատասխան մանրամասնությամբ ամբողջական հաշվառումներ: Իսկ նման հաշվառումների իրականացումը նախևառաջ պետք է պայմանավորվի այդպիսի ծառայություններ մատուցող սուբյեկտների կողմից հաստատություն/տարածք այցելուների մուտքի իրավունքի (նախատեսված՝ ինչպես

	վճարովի, այնպես էլ անվճար ծառայություններից օգտվելու համար) միասնական տոմսային համակարգի ներդրմամբ, ինչի շրջանակում կարող են նախատեսվել նաև հայցվող բաշխվածությամբ և մանրամասնությամբ ցուցանիշներ: Այդպիսի միասնական տոմսային համակարգի ներդրումը հնարավորություն կընձեռի խնդրո առարկա ոլորտը կարգավորող պետական մարմնին ձևավորելու համապատասխան ոլորտային վարչական ռեգիստրներ, ինչի արդյունքում հնարավոր կլինի դիտարկել նաև խնդրո առարկա հաստատություններ այցելությունների վերաբերյալ հայցվող տեղեկությունները և դրանց շարժընթացը: Մինչդեռ, Արմստատի կողմից կիրառվող հաշվառման համակարգը հիմնվում է խնդրո առարկա ոլորտում ծառայություններ մատուցող ռեսպոնդենտների կողմից լրացվող և Արմստատին ներկայացվող հաշվետվությունների վրա, որոնց հիմքում ընկած ռեսպոնդենտների կողմից իրականացվող համապատասխան հաշվառումները չեն ենթադրում հայցվող բաշխվածությամբ տեղեկությունների ամբողջական հավաքում (նշվածը Արմստատի աշխատակիցների կողմից աշխատանքային

	կարգով ճշտվել է խնդրո առարկա ոլորտում գործունեություն իրականացնող ռեսպոնդենտների հետ): Օրինակ, վերջիններիս կողմից իրականացվող հաշվառման արդյունքներով հաճախ կամ ընդհանրապես չեն տարանջատվում այցելուների սեռի, քաղաքացիության, տարիքի վերաբերյալ տվյալներ: Ավելին, այն հաստատությունները, որոնք մատուցում են խնդրո առարկային վերաբերող անվճար ծառայություններ (մուտքավճարի լիակատար բացակայություն), անհնար է դարձնում հայցվող տեղեկությունների վերաբերյալ հաշվառումների իրականացումը:

23. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն	**25.07.2025թ.** **08.8/33343-2025**
Նախագծի նախաբանում որպես Նախագծով ներկայացվող իրավական ակտի ընդունման հիմք՝ ի թիվս այլ նորմերի, հղում է կատարված նաև «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 16-րդ հոդվածին: Այս առումով անհրաժեշտ է անդրադառնալ հիշյալ նորմի իրավական բովանդակությանը, մասնավորապես՝ նկատի ունենալ, որ վերջինիս դրույթներով սահմանվում են վիճակագրական ծրագրի բովանդակությանն առնչվող դրույթներ՝ նախատեսելով, թե ինչ կարգավորումներ պետք է պարունակի վիճակագրական ծրագիրը:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

Վերոգրյալից բխում է, որ «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 16-րդ հոդվածը չի պարունակում Նախագծի ընդունման համար լիազորող նորմ, հետևաբար առաջարկում ենք Նախագծի նախաբանից հանել նշված նորմին կատարված հղումը՝ նկատի ունենալով Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Միաժամանակ, հայտնում ենք, որ նշված նախագիծը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված կարգով պետական-իրավական փորձաքննության ներկայացնելու դեպքում ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալության կողմից դրա վերաբերյալ կտրամադրվի փորձագիտական եզրակացություն:	
24. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն	**15.07.2025թ.** **1111/38803-25**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-
25. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն	**28.07.2025թ.** **1/01.4/8311-2025**
1. «6.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ» բաժնից հանել 18-րդ՝ «Գրանցված ճանապարհատրանսպորտային պատահարների մասին» տողը՝ քանի որ այն չի հանդիսանում ոլորտը բնութագրող ցուցանիշ:	**1.Չի ընդունվել:** Արմստատը հրապարակում է արտակարգ դեպքերի վիճակագրությունը, որը կազմվում է վարչական ռեգիստրից ստացվող «ՁԵՎ 1-արտակարգ դեպք» վիճակագրական հաշվետվության հիման վրա և որտեղ կիրառվում է «Արտակարգ դեպքերի, պատահարների ազգային դասակարգիչը»: Եվ

	քանի որ ճանապարհատրանսպորտային պատահարները ներառված են սույն դասակարգչում՝ որպես տեխնածին արտակարգ դեպքի տեսակ, ուստի նպատակահարմար չէ այն հանելը:
2. Մաս 3-ում՝ առավել ճշգրիտ վերլուծություններ իրականցնելու նպատակով. 1) «3.1.1.ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ» բաժնի 1000-102՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով» ժողովածուի մեջ ներառել նաև խոշորացված համայնքների վերաբերյալ տվյալները,	**2.** **1) Չի Ընդունվել:** Ընդհանրապես, պաշտոնական վիճակագրության պրակտիկայում ընդունված է ռեգիոնալ վիճակագրության ամփոփումը և տարածումն իրականացնել երկրի վարչատարածքային բաժանման առավել խոշոր միավորների սահմաններում՝ կապված ոչ միայն վերը հիշատակված տեղեկության հավաքման առանձնահատկություններով, այլև պաշտոնական վիճակագրության մեջ օգտագործվող այլ գործիքների, մասնավորապես չհաշվառվող տնտեսության (ստվերային, ոչ ֆորմալ, անօրինական և տնային տնտեսությունների թողարկում սեփական սպառման) կիրառմամբ (օրինակ՝ գնահատականների համակարգի օգտագործում և այլն): Այլ կերպ ասած, երկրի վարչատարածքային բաժանման սկզբնական միավորը՝ համայնքը

	(բնակավայրը), վարչական և ոչ թե վիճակագրական հաշվառման օբյեկտ է հանդիսանում: Մինչ համայնքների կողմից բնակավայրերի մակարդակով սոցիալ-տնտեսական և բնապահպանական ցուցանիշների համախմբով վարչական (անվանական հասցեական) տեղեկատվական հիմքով ռեգիստրների ձևավորումը և վարումը, այդպիսի ապաագրեգացված տեղեկությունների աղբյուր են հանդիսանում հիմնականում ընտրանքային հետազոտությունները, որոնց արդյունքները, ընտրանքի ուժով, նվազագույն ներկայացուցչականություն են ապահովում առավելագույնը մարզի մակարդակով:
2) «3.1.2.ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԵՐ» բաժնի «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ» մասի 1220-202՝ «Գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման հանրագումարները» տեղեկագրում ներառել նաև ցուլերի, ավանակների, ջորիների, գոմեշների, ճագարների, բրոյլերների, հնդկահավերի, մորթատու գազանների քանակները:	**2) Ընդունվել է:** Հայցվող կտրվածքով գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու համար անհրաժեշտ փոփոխություններ կկատարվեն վիճակագրական հաշվառման համապատասխան փաստաթղթերում, որոնցով հավաքված տվյալները կամփոփվեն և կհրապարակվեն հիշյալ վիճակագրական տեղեկագրում:

3. Մաս 11-ի «1.2.4.ՏՐԱՆՍՊՈՐՏ» բաժնի «Տրանսպորտ» մասի 124002՝ «Ավտոմոբիլային տրանսպորտ և ոչ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը» Ձև 1-տրանսպորտ վիճակագրական փաստաթղթում կամ այլ ձևաչափով արտանետումների հաշվարկի իրականացման նպատակով ներառել նաև տրանսպորտային միջոցների մասին տեղեկատվություն, այդ թվում՝	**3.**
1) տրանսպորտային միջոցների քանակն ըստ կատեգորիաների և ըստ վառելանյութերի,	**1) Ընդունվել է ի գիտություն:** Արմստատը կվերանայի խնդրո առարկա վիճակագրական ցուցանիշների հրապարակման շրջանակը:
2) տրանսպորտային միջոցների վազքն ըստ կատեգորիաների և ըստ վառելանյութերի,	**2) Ընդունվել է ի գիտություն:** Տե՛ս 3-րդ կետի 1-ին ենթակետի պարզաբանումը:
3) ուղևորություններն ըստ տրանսպորտային միջոցի տեսակի,	**3) Չի ընդունվել:** Խնդրո առարկա վիճակագրական ցուցանիշները իրենց բովանդակությամբ վարչական բնույթի տեղեկություններ են և դուրս են պաշտոնական վիճակագրության նպատակներից:
4) ուղևորության երկարությունն ըստ տրանսպորտային միջոցի տեսակի,	**4) Չի ընդունվել:** Նման հաշվառումը դուրս է վիճակագրական նպատակներից և գտնվում է երթուղիների

	մրցույթ իրականացնող համապատասխան մարմինների տիրույթում:
5) տրանսպորտային միջոցների շահագործման տևողությունն ըստ կատեգորիաների,	**5) Չի ընդունվել:** Տե՛ս 3-րդ կետի 3-րդ ենթակետի պարզաբանումը:
6) տրանսպորտային միջոցների սեփականատերերի թիվը,	**6) Չի ընդունվել:** Տե՛ս 3-րդ կետի 3-րդ ենթակետի պարզաբանումը:
7) երթևեկության արագությունն ըստ տրանսպորտային միջոցի տեսակի:	**7) Չի ընդունվել:** Տե՛ս 3-րդ կետի 3-րդ ենթակետի պարզաբանումը:
4. Առաջարկվում է դիտարկել գյուղատնտեսությունում կիրառվող պարարատանյութերի և թունաքիմիկատների, տարբեր արտադրությունների ժամանակ օգտագործվող հումքատեսակների (այդ թվում երկրորդային), աղբավայրերի, դրանց տարածքների, աղբի քանակի, մաքրման կայանների, դրանց հզորությունների վերաբերյալ տեղեկատվության ներառման հարցը:	**4. Ընդունվել է ի գիտություն:** Սույն տեղեկությունը վարչական ռեգիստրի գործառույթ է, որի տնօրինման պարագայում Արմստատը կներառի Նախագծում: Ինչ վերաբերում է աղբավայրերի, դրանց տարածքների, աղբի քանակի, ինչպես նաև մաքրման կայանների և դրանց հզորությունների վերաբերյալ տեղեկությանը, ապա այն տնօրինում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը: Արմստատը սույն նախարարության հետ

5. Միաժամանակ հայտնում ենք, որ Կառավարության 2025 թվականի հուլիսի 24-ի N1001-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 7-ի «Թափոնների պետական հաշվառման կարգը սահմանելու մասին» N 1739-Ն որոշման մեջ, համաձայն որի «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» Զև N 1-թափոն (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվությունների կազմման և լիազոր մարմին ներկայացման գործընթացները պետք է իրականացվեն բացառապես էլեկտրոնային եղանակով, այդ նպատակով ստեղծված՝ «Շրջակա միջավայրի կառավարման ոլորտի թվային ծառայությունների հարթակ» էլեկտրոնային համակարգի համապատասխան բաժնի միջոցով:	ներկայում նախաձեռնել է քննարկումներ, որոնք դեռևս շարունակվում են: **5. Ընդունվել է ի գիտություն:**
26. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	**31.07.2025թ.** **01/21/24659-2025**
1. Նախագծի Մաս 1-ի 5.5-րդ բաժնի 50-րդ՝ «Նախադպրոցական հաստատությունների գործունեությունը» տողով հավաքագրվող տվյալների (Զև 85-գմ, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի թիվ 60-Ն որոշում, 19 հոկտեմբերի 2018թ.) վերաբերյալ առաջարկությունները ներկայացված են ստորև. Նախադպրոցական հաստատությունների մասին Զև 85-գմ (տարեկան) վիճակագրական հաշվետվության մեջ՝ **Բաժին 1-ում** ներկայացնել նախադպրոցական հաստատության տեսակի ամբողջական ցանկը 1. Մսուր 2. Մանկապարտեզ	**1. Չի ընդունվել:** 2026թ.-ի օգոստոս ամսին ԿԳՄՍՆ-ն նախատեսում է Արմստատին ներկայացնել նաև խնդրո առարկային վերաբերող լրացուցիչ առաջարկությունների փաթեթ, ինչպես նաև 2026թ.-ից նախատեսում է հանրակրթության վարչական ռեգիստրից բացի վարել նաև նախադպրոցական կրթությանը վերաբերող տեղեկությունների վարչական ռեգիստր, որի արդյունքներով ձևավորվելիք

3. Մսուր-մանկապարտեզ 4. Նախակրթարան 5. Կենտրոն 6. Այլընտրանքային խումբ/մոդել 7. Մասնաճյուղ **Բաժին 2-ում** խմբագրել նախադպրոցական հաստատության սենյակները, օժանդակ տարածքները ստորև ներկայացված ցանկին համապատասխան. 1. Ընդունարան/հանդերձասենյակ 2. Խմբասենյակ 3. Ննջասենյակ 4. Զուգարան 5. Սպորտային դահլիճ 6. Մարզահրապարակ 7. Երաժշտական դահլիճ 8. Լողավազան 9. Բացօթյա լողավազան 10. Խաղահրապարակ 11. Տաղավար 12. Մեթոդական կաբինետ 13. Խոհանոց/բուֆետային մաս 14. Բուժ. սենյակ 15. Ապաստարան 16. Պահեստ սննդի 17. Պահեստ տնտեսական 18. Այլ նշանակության **Բաժին 3-ում** «երեխաների թվաքանակը տարեվերջին» ցուցանիշը խմբագրել «երեխաների թվաքանակը սեպտեմբերի դրությամբ» բառերով, իսկ «7 տարեկան» ցուցանիշը հանել, քանի որ 7 տարեկանները հաճախում են դպրոց:	տեղեկությունները նախատեսվում է ամփոփել մինչև 2026 թվականի օգոստոս ամիսը: Նշվածով պայմանավորված Արմստատը նպատակահարմար է գտնում առաջարկվող փոփոխություններին անրադառնալ խնդրո առարկա վարչական տվյալների հավաքման գործիքակազմի ամբողջական փոփոխությունների իրականացումից և ներդրումից հետո միայն՝ հաշվի առնելով նաև Օրենքով սահմանված ոչ հակասական**ության**, համադրելիության սկզբունքների պահպանման, ինչպես նաև ցուցանիշների կայուն պարբերականության ապահովման պարտավորությունները: Սույն մոտեցումը, աշխատանքային կարգով քննարկվել և համաձայնեցվել է նաև ԿԳՄՄՆ-ի համապատասխան մասնագետների հետ:

Բաժին 4-ում «խմբերի քանակը՝ այդ թվում՝ 3 և բարձր տարիքի երեխաների**»** ցուցանիշը խմբագրել նշված ցանկին համապատասխան. 1. Մսուրային Խմբեր 2. 2. Նախադպրոցական խմբեր **Բաժին 5-ում «**աշխատողների թվաքանակը**»** ցուցանիշը ներկայացնել աշխատողների թվաքանակը տվյալ տարվա սեպտեմբերի դրությամբ, ինչպես նաև ավելացնել աղյուսակ մանկավարժական կրթությամբ աշխատակիցների վերաբերյալ: **Բաժին 6-ում** մանկավարժա-դաստիարակչական աշխատակազմը ներկայացնել ըստ մ**անկավարժական** աշխատանքային ստաժի: Առաջարկվող փոփոխությունների նպատակն է հաշվետվության ձևաչափի բովանդակությունը համապատասխանեցնել օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին, հաշվի առնելով որ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի վերոնշյալ որոշումից հետո տեղի են ունեցել բազմաթիվ փոփոխություններ, այդ թվում՝ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքում: Ներկայացվածը նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերաբերյալ առաջարկությունների առաջին փաթեթն է: ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը նախատեսում է 2026 թվականից սկսած հանրակրթության վարչական ռեգիստրից բացի (Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) միջոցով) վարել նաև նախադպրոցական կրթության վարչական ռեգիստրը, որը նկատի ունենալով, ակնկալվում է մինչև 2026 թվականի օգոստոս ամիսն ամփոփել և տարեկան ծրագրի շրջանակում ՀՀ վիճակագրական կոմիտե ներկայացնել առաջարկությունների ևս մեկ փաթեթ՝ նպատակ ունենալով «Նախադպրոցական հաստատությունների մասին» 2026 թվականի վիճակագրական հաշվետվությունը ՀՀ վիճակագրական կոմիտե ներկայացնել	

ԿՏԱԿ-ի կողմից հավաքագրվող և տվյալների բազաներում պահվող տեղեկատվության հիման վրա:	
2. Նախագծի Մաս 1-ի 5.8-րդ բաժնի «Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության» միջոցով ստացվող տվյալներում առաջարկում ենք դիտարկել մշակույթի ոլորտի հետևյալ տվյալների հավաքագրման և հրապարակման հնարավորությունը.	**2.Չի ընդունվել:**
1) Նախագծի 580002 ծածկագրի ներքո՝ Սպառողական զամբյուղում մշակութային ծախսերի մասնաբաժինը,	**1)** Նախագծի 580002 ծածկագրով նախատեսված Տնային տնտեսությունների (ՏՏ) սպառողական ծախսերի կառուցվածքն իր մեջ արդեն իսկ ներառում է մշակութային ծախսերը՝ դրամական և %-ային արտահայտությամբ (տե՛ս «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2024» հրապարակման աղյուսակ 3.5, էջ 85): Ընդ որում, հարկ է նշել, որ խնդրո առարկա աղյուսակում ներկայացված ցուցանիշների հաշվարկման համար հիմք հանդիսացող Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքները վերաբերում են ՏՏ բոլոր անդամներին՝ անկախ տարիքից:
2) Նախագծի 580009 ծածկագրի ներքո՝ հարցաթերթում ավելացնելու հարց/հարցեր, որոնց միջոցով հնարավոր կլինի բացահայտել մշակութային հաստատություններ և/կամ միջոցառումների (թատրոն,	**2)** ՏՏԿԱՀ-ի հիմնական նպատակը ՀՀ-ում աղքատության ցուցանիշների գնահատումն է՝ կառուցվածքային վիճակագրական

համերգ, կինո, փառատոներ, թանգարաններ, մշակութային ժառանգության հուշարձաններ և այլն) հաճախելու պարբերականությունը:	ցուցանիշների միջոցով: Ըստ այդմ, մշակութային հաստատություններ և/կամ միջոցառումներ հաճախելու պարբերականության վերաբերյալ, ինչպես նաև ֆիզիկական ակտիվության և սպորտի վերաբերյալ բնակչության վերաբերմունքն ու կենսակերպը բացահայտող առաջարկվող հարցադրումների ներառումը ՏՏԿԱՀ հարցաթերթում չի բխում ՏՏԿԱՀ-ի նպատակից, ինչով էլ պայմանավորված այն նպատակահարմար չէ իրականացնել՝ հաշվի առնելով նաև «Պաշտոնական վիճակագրության մասին օրենքի» (Օրենք) 14-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը, ինչպես նաև ռեսպոնդենտ ՏՏ-ների ներկայացուցիչների դժգոհությունները՝ այդ թվում առանց այն էլ ծանրաբեռնված հարցաշարի պատճառով, որի արդյունքում տարեցտարի աճում է ՏՏԿԱՀ-ին մասնակցելուց հրաժարումները (տե՛ս https://armstat.am/file/article/poverty_2024_a_1.pdf հղման 16-րդ էջի աղյուսակի տվյալները): Ավելին, խնդրո առարկայի վերաբերյալ

	հնարավոր տվյալների ստացման նպատակով գուցե անհրաժեշտ լինի ձևավորել նմանատիպ հաստատություններ այցելող անձանց վերաբերյալ վարչական ռեգիստրներ, որոնց արդյունքում կարող են բացահայտվել հայցվողին առնչվող տեղեկություններ, օրինակ, մշակութային և/կամ սպորտային հաստատություններ հաճախումների պարբերականությունը, այդ նպատակներով անձանց կողմից իրականացվող ծախսերը և այլն:
3. Առաջարկում ենք դիտարկել Նախագծի Մաս 1-ի 5.8-րդ բաժնի «Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության» հարցաթերթում ֆիզիկական ակտիվության և սպորտի վերաբերյալ բնակչության վերաբերմունքը և կենսակերպը բացահայտող հարցի/հարցերի (օրինակ՝ ֆիզիկական ակտիվությամբ զբաղվողների մասնաբաժինն ըստ տարիքային խմբերի) ներառումը:	**3.Չի ընդունվել:** Տե՛ս 2-րդ կետի մեկնաբանությունը:
4. Առաջարկում ենք Հաշվետվության մեջ թանգարանների գործունեության բաժնի Ձև 1-ում՝ 1) Բաժին 1-ի տող 100-ի 100.8 կետը դարձնել «ֆոտո-ֆոնո»,	**4.** **1) Ընդունվել է ի գիտություն:** Սույն վիճակագրական հաշվետվության ձևում փոփոխություն կատարելու պարագայում Արմստատը նշված առաջարկությունը հաշվի կառնի:

2) Բաժին 3-ի 311 տողի ծածկագիրը բաժանել՝ 311.1-ուսանողներ, 311.2-աշակերտներ, 311.3-ՀՀ քաղաքացիներ, 311.4-զբոսաշրջիկներ, 311.5-թոշակառուներ, 311.6-հաշմանդամություն ունեցողներ, 312 տողի ծածկագիրը լրացնել՝ 312.1-ուսանողներ, 312.2-սովորողներ, 312.3-զբոսաշրջիկներ, 312.4-թոշակառուներ, 312.5-հաշմանդամություն ունեցողներ,	**2) Չի ընդունվել:** Առաջարկվող մանրամասնությամբ տվյալների հավաքման համար նախևառաջ անհրաժեշտ է ունենալ համապատասխան մանրամասնությամբ տվյալների ամբողջական հաշվառման համակարգ, ինչը սակայն, ինչպես պարզվել է խնդրո առարկա ոլորտում գործունեություն իրականացնող և Արմստատի համար ռեսպոնդենտ հանդիսացող որոշ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ աշխատանքային քննարկումների արդյունքում, ներկայում ցավոք առկա չէ: Ավելին, այն հաստատությունների մասով, որոնք մատուցում են խնդրո առարկային վերաբերող անվճար ծառայություններ, անհնարին է այդ թվում հայցվող տեղեկությունների վերաբերյալ հաշվառումների իրականացումը: Ըստ այդմ, ռեսպոնդենտների կողմից հայցվող մանրամասնությամբ Արմստատին տեղեկություններ ներկայացնել հնարավոր չէ: Բացի այդ, հարկ է նշել, որ խնդրո առարկա բաշխվածությամբ հայցվող տեղեկությունների վիճակագրական գործիքակազմերով հավաքումն Արմստատը նպատակահարմար չի համարում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նման

	մանրամասնությամբ հաշվառումների իրականացումը նախևառաջ պետք է պայմանավորվի այդպիսի ծառայություններ մատուցող սուբյեկտների շրջանում հաստատություն/տարածք այցելուների մուտքավճարի/մուտքի իրավունքի (նախատեսված՝ ինչպես վճարովի, այնպես էլ անվճար ծառայություններից օգտվելու համար) միասնական տոմսային համակարգի ներդրմամբ, որում կարող են նախատեսվել այդ թվում նաև հայցվող բաշխվածությամբ և մանրամասնությամբ ցուցանիշների հավաքումը: Այդպիսի միասնական տոմսային համակարգի ներդրումը հնարավորություն կնձեռի խնդրո առարկա ոլորտը կարգավորող պետական մարմնին ձևավորելու համապատասխան ոլորտային վարչական ռեգիստրներ, ինչի արդյունքում, կենդանի ժամանակում, հնարավոր կլինի դիտարկել նաև խնդրո առարկա հաստատություններ այցելությունների վերաբերյալ հայցվող տեղեկությունները և դրանց շարժընթացը: Մինչդեռ, Արմստատի կողմից ներկայում կիրառվող հաշվառման համակարգը հիմնվում է խնդրո առարկա ոլորտում ծառայություններ մատուցող ռեսպոնդենտների

	կողմից լրացվող և Արմստատին ներկայացվող հաշվետվությունների վրա:
3)Բաժին 5-ի տող 500.2 տողի «գիտական» բառը դարձնել «գիտահետազոտական», 502 տողից հանել «նկարիչ» բառը, իսկ տող 500-ից հանել՝ 501.1, 502.2, 503.3 կետերը, քանի որ էքսկուրսավարների որակավորման կարգեր չկան:	**3) Ընդունվել է ի գիտություն:** Տե՛ս 4-րդ կետի 1-ին ենթակետի մեկնաբանությունը:
5. Առաջարկում ենք գրադարանների գործունեության մասին բաժնի Ձև 6-ում՝ Բաժին 4.1-ը խմբագրել՝ «ընթերցողների թվաքանակը՝ իգական», ինչպես նաև ավելացնել Բաժին 4.2՝ «ընթերցողների թվաքանակը՝ արական» բովանդակությամբ:	**5.Չի ընդունվել:** Խնդրո առարկա հաշվետվության ձևում լրացվող տեղեկություններից հնարավոր է ստանալ գրադարաններում արական սեռի ընթերցողների թվաքանակը՝ ընդամենը ընթերցողների թվաքանակից հանելով կին ընթերցողների թվաքանակը:
6. Բաժին 5-ում Հաճախումների և միջոցառումների քանակը առանձնացնել՝ Բաժին 5. «Հաճախումների քանակը» և Բաժին 5.1 «միջոցառումների քանակը»: Բաժին 5-ի 500.1 ծածկագրով տողը խմբագրել՝ 1-12-րդ դասարանների սովորողների, ինչպես նաև լրացնել 500.2- ուսանողներ, 500.3-թոշակառուներ և 500.4-հաշմանդամություն ունեցողներ: Բաժին 5.1-ը լրացնել 510.1- 1-12-րդ դասարաների սովորողների համար, 510.2- ուսանողներ, 510.3-թոշակառուներ և 510.4-հաշմանդամություն ունեցողներ: Բաժին 6.1-ը խմբագրել՝ «գրադարանային աշխատողներից՝ իգական», ինչպես նաև ավելացնել Բաժին 6.2՝ «գրադարանային աշխատողներից՝ արական» բովանդակությամբ:	**6. Չի ընդունվել:** Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկությունների հաշվառում գրադարանային գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների (ռեսպոնդենտներ) կողմից ընդհանրապես չի իրականացվում (աշխատանքային կարգով ճշտվել է որոշ գրադարանների հետ), հետևաբար, այդ ռեսպոնդենտների կողմից նշվածի վերաբերյալ Արմստատին ամփոփ

	տեղեկություններ չեն կարող ներկայացվել, ինչով էլ պայմանավորված նպատակահարմար չէ հաշվետվության ձևում խնդրո առարկա փոփոխության իրականացումը: Ինչ վերաբերում է խնդրո առարկա հաշվետվության 5-րդ բաժնում 1-9-ի փոխարեն 1-12 դասարանների աշակերտների, ինչպես նաև «ուսանողներ», «թոշակառուներ» բաշխվածությամբ տեղեկությունների լրացման վերաբերյալ առաջարկությանը, ապա քանի որ Արմստատի կողմից ռեսպոնդենտների հետ իրականացված աշխատանքային քննարկումների արդյունքում պարզվել է վերջիններիս կողմից նշված բաշխվածությամբ տեղեկություններ ներկայացնելու հնարավորությունը, խնդրո առարկա վիճակագրական հաշվետվության ձևում փոփոխություններ իրականացնելիս նշվածի մասով ևս կկատարվեն համապատասխան լրացումներ: Իսկ, հաշվետվության Բաժին 6.1-ի մասով ներկայացված առաջարկությունը չի ընդունվել, քանզի Բաժին 6-ի ու դրա ներքո գտնվող Բաժին 6.1-ի տեղեկություններից հնարավոր է ստանալ հայցվող արական սեռի գրադարանային աշխատողների թվաքանակը:

7. Առաջարկում ենք նաև ավելացնել Բաժին 7 «Գրադարանների բնույթը և գերատեսչական ենթակայությունը» բովանդակությամբ: Առաջարկություններն ընդունելի լինելու դեպքում, ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը պատրաստ է համագործակցել ՀՀ վիճակագրական կոմիտեի հետ՝ հարցաթերթում նոր հարցեր ձևակերպելու և ներառելու նպատակով:	**7.Ընդունվել է մասամբ:** Խնդրո առարկա ռեսպոնդենտների հաշվառման վերաբերյալ տեղեկություններից, այն է՝ «կազմակերպական իրավական ձև», «կազմակերպության հիմնադիր» և այլն, Արմստատը հնարավորություն ունի տարբերակելու պետական, համայնքային ենթակայության գրադարանները, ինչպես նաև ոչ պետական գրադարանները: Ըստ այդմ, եթե առկա է նման բաշխվածքով ցուցանիշների հրապարակման անհրաժեշտություն, ապա Արմստատը կարող է այն իրականացնել՝ համապատասխան հրապարակման մեջ ավելացնելով նաև լրացուցիչ աղյուսակ՝ առանց նշվածի մասով ռեսպոնդենտներին լրացուցիչ ծանրաբեռնելու:
27. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն	
Չի ներկայացվել	
28. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	**01.08.2025թ.** **ՆՄ/ԱՀ-2-3/21533-2025**
Ներկայացնում եմ ընդհանուր առաջարկություններ ՏՏԿԱՀ մեթոդաբանության մասին «2026 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ՝ ելնելով այն հանգամանքից, որ ընտանիքի	

կեսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (այսուհետ՝ ԸԿԲՈՒՆ) համակարգի ընթացքի և վերջնարդյունքների գնահատման ցուցանիշների մի զգալի մասը ստացվում է տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (այսուհետ՝ ՏՏԿԱՀ) արդյունքների հիման վրա. **1.** 2023 թ.-ի ՏՏԿԱՀ-ին մասնակցել է/հարցվել է ընդամենը 598 ընտանիք (ընդամենը հարցված 5184-ից), որոնք հաշվառված են եղել անապահովության գնահատման նպաստների համակարգում և նրանցից 571-ը նպաստի կամ հրատապ օգնության ստացում է նշել: Ըստ տնային տնտեսությունների գլխավոր համախմբության, կլաստերների ու ստրատաների համամասնությունների տվյալների բազայի կշռումը և տարածումը հանգեցնում է նրան, որ 2023 թ.-ին Հայաստանում եղել է նպաստների համակարգում հաշվառված 87104 ընտանիք կամ տնային տնտեսություն, իսկ դրանցից 82898-ը նպաստ կամ հրատապ օգնություն է ստացել: Այսպիսով, 598 ընտանիքի նպաստառությանը վերաբերող տվյալները տարածվում են ամբողջ հանրապետության վրա՝ ճիշտ նույն սկզբունքով ու համամասնությամբ, ինչ 5184 ընտանիքի տվյալները տարածվում են 803327 ընտանիքի վրա: Սակայն, նպաստառուների գլխավոր համախմբությունը բոլորովին այլ համամասնություններ ունի՝ համեմատած տնային տնտեսությունների ընդհանուր համամասնությունների հետ: Հենց այդ պատճառով էլ տարածումից հետո ստացված նպաստառուների քանակի տվյալները չեն համապատասխանում նպաստառու ընտանիքների մասին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ ԱՍՀՆ) տվյալներին (2023 թ.-ի վերջի դրությամբ՝ 71486=68023 նպաստ+3445 եռամսյակային) ընտանիք: ՏՏԿԱՀ-ում նպաստառուների քանակը շուրջ 11 հազար ընտանիքով ավելին է: Համարյա նույն պատկերն է նաև 2022 թ.-ի ՏՏԿԱՀ-ի համար, սակայն նախորդող հետազոտություններում այս խնդիրը չի առաջացել: Այս պարագայում խեղաթյուրվում են «Հայաստանի սոցիալական	**1.Չի ընդունվել:** «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցի (Զեկույց) Գլուխ 4-ում ներկայացված վերլուծությունները, մինչ 2024թ.-ն իրականացվել են Համաշխարհային Բանկի (ՀԲ) փորձագետների կողմից՝ խնդրո առարկային վերաբերող ՀԲ-ի համապատասխան մեթոդաբանության հիման վրա: Սկսած 2024թ.-ից նշված վերլուծության իրականացումը ՀԲ-ի կողմից փոխանցվել է Արմստատին, որի արդյունքում խնդրո առարկա ցուցանիշների հաշվարկները պետք է իրականացվեն ՀԲ-ի կողմից մշակված համապատասխան մեթոդաբանությամբ, ՀԲ-ի փորձագետների խորհրդատվությամբ և վերահսկողությամբ: Համաձայն Զեկույցի պատրաստման համար կիրառվող ՀԲ-ի մեթոդաբանական պարզաբանումների՝ «*Հետազոտությամբ ստացված արդյունքները որոշակի վիճակագրական սխալով (շեղմամբ) են ներկայացնում ՀՀ բնակչության պատկերը:*

պատկերը և աղքատությունը» հրապարակման Գլուխ 4-ում բերված վերլուծությունները, մասնավորապես՝ ԸԿԲՈՒՆ համակարգում տնային տնտեսությունների ընդգրկվածության և աղքատության վրա այդ ծրագրի ազդեցության մասով: Նկատի ունենալով, որ ՏՏԿԱՀ-ն մասնավորապես այն միակ գործիքն է, որ գնահատում է սոցիալական աջակցության և ԸԿԲՈՒՆ ազդեցությունն աղքատության կրճատման վրա, առաջարկվում է ապահովել, որ եղած կշռման ու տարածման տեխնիկան ճիշտ ներկայացուցչականության ու քանակի բերի նաև ԸԿԲՈՒՆ նպաստառու ընտանիքներին՝ առնվազն մարզային և ՀՀ կտրվածքներով:	*Նման վիճակագրական սխալ պարունակում են նաև «նախատրանսֆերտային» և «հետտրանսֆերտային» աղքատության մակարդակի գնահատականները: Աղքատության մակարդակի վրա սոցիալական տրանսֆերտների ներգործությունն ունի վիճակագրական նշանակություն, եթե «նախատրանսֆերտային» և «հետտրանսֆերտային» աղքատության միջին մակարդակների վստահության միջակայքերը չեն համընկնում» (տե՛ս https://armstat.am/file/article/poverty_2024_a_4.pdf հղման 95-րդ էջի ներքո տողատակի 3-րդ կետով ներկայացված պարզաբանումը):* Բացի այդ, ՏՏԿԱՀ-ի արդյունքում ստացվող տվյալների հիմնական նպատակը երկրում աղքատության վիճակագրական **հարաբերական**/ կառուցվածքային ցուցանիշների հաշվարկն է, այլ ոչ թե **բացարձակ** ցուցանիշների գնահատումը և դրանց արդյունքների համադրումը երկրում առկա համապատասխան վարչական ռեգիստրների տեղեկությունների հետ: Ըստ այդմ, որքան էլ որ ՏՏԿԱՀ-ի արդյունքում ստացվող տվյալները համապատասխան կշիռներով տարածվում են գլխավոր

2. «Հայաստանի սոցիալական վիճակը» պարբերականում Արմստատը՝ ԱՍՆՀ տրամադրած տվյալներով հրապարակում է նպաստառու ընտանիքի քանակների մասին տեղեկատվություն հետևյալ ձևաչափով՝

Ընտանեկան և սոցիալական նպաստներ ստացող ընտանիքների քանակը, 20...թ. տարեվերջ

	Ընտանիքների քանակը
Ընտանեկան նպաստ ստացող	
Սոցիալական նպաստ ստացող	
Ընդամենը	

համակցության վրա, հաշվի առնելով ընտրանքի մեթոդաբանական առանձնահատկությունները (ընտրանքային համակցության չափ, ռեսպոնդենտների կողմից ներկայացվող սուբյեկտիվ պատասխանների ճշգրտության աստիճան, ընտրանքի պատահական բնույթ և ընդգրկման աշխարհագրություն և այլն), դրանց արդյունքում մոտարկվող բացարձակ ցուցանիշները օբյեկտիվ պատճառներով չեն կարող կրկնել համապատասխան վարչական ռեգիստրներում պահվող նույնաբովանդակ տեղեկությունները, մինչդեռ դրանց միջոցով կարող են հարաբերականորեն բնութագրվել այդ թվում՝ խնդրո առարկա երևույթների կառուցվածքը և շարժընթացը:

2.Ընդունվել է ի գիտություն:

Խնդրո առարկայի շուրջ Արմստատի և ԱՍՀՆ-ի համապատասխան մասնագետների միջև իրականացված աշխատանքային քննարկումների արդյունքում պարզվել է, որ ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգի խնդրո առարկա փոփոխությունները ԱՍՀՆ-ի կողմից նախատեսվում են ամբողջապես ներդնել 2026թ.-ի հունվարին: Հետևաբար,

Նկատի ունենալով նպաստների համակարգում ընտանիքների շարժը՝ նպատակահարմար է ԱՍՆՀ և Արմստատ համագործակցությամբ այս ձևաչափը ձևափոխել այսպես՝

Ընտանեկան և սոցիալական նպաստներ ստացող ընտանիքների քանակը, 2... թ.-ին, եռամսյակային կտրվածքով

	1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Տարեկան միջին	Տարեվերջի դրությամբ
Ընտանեկան նպաստ ստացող						
Սոցիալական նպաստ ստացող						
Եռամսյակային օգնություն ստացող						
Ընդամենը						

2026 թ.-ի ծրագրում՝

530008 ծածկագրով «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստները» վիճակագրական աշխատանքի հաճախականությունը կիսամյակայինի փոխարեն դարձնել եռամսյակային, որոշ հրապարակումներում նաև միջին տարեկան և տարեվերջի դրությամբ:

ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշմամբ սույն թվականի մարտի 17-ից ՀՀ Կոտայքի և Սյունիքի մարզերում ներդրվել է ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգ, իսկ 2026 թվականի հունվարից՝ ամբողջ հանրապետությունում, ուստի առաջարկվում է «Ընտանեկան նպաստ» և «Սոցիալական նպաստ» տողերը փոխարինել «Անապահովության նպաստ» տողով:

ներկայացված առաջարկություններին համապատասխան Արմստատի կողմից իրականացվելիք աշխատանքները կարող են վերաբերել 2026թ. առաջին կիսամյակին և դրան հաջորդող ժամանակահատվածներին: Ըստ այդմ, նպատակահարմար է, որպեսզի ԱՍՀՆ-ի կողմից նախատեսվող նշված փոփոխությունների իրականացումից և խնդրո առարկա համակարգի ամբողջական ներդրումից հետո միայն Արմստատը՝ ԱՍՀՆ-ի հետ համագործակցությամբ, փոփոխություններ ու լրացումներ կատարի համապատասխան վիճակագրական ամփոփ հաշվետվական ձևում՝ մինչ այդ ընկած ժամանակահատվածների վերաբերյալ ստացվող տեղեկությունների անընդհատությունն ապահովելու նպատակով:

3. Նկատի ունենալով, որ ներկայում ԸԿԲՈՒՆ համակարգն անցում է կատարում ըստ դրամական տնօրինվող եկամուտների անապահովության որոշման սկզբունքին, ըստ եկամուտների աղքատության ցուցանիշները կարևորվում են: Սակայն, չնայած նրան, որ տնային տնտեսությունների դրամական եկամուտները, դրանց բաշխումն ըստ եկամտացին դեցիլների, ըստ եկամուտի անհավասարության ցուցանիշները հրապարակվում են «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» հրապարակման մեջ, ըստ եկամուտների աղքատության ցուցանիշները 2018 թ.-ից հետո այլևս չեն հրապարակվում:

Առաջարկվում է ավելացնել եկամտային աղքատության ցուցանիշները հրապարակման մեջ*

Ցուցանիշի ծածկագիրը	Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի ավելացման առաջարկ	Ընդգրկվածության ավելացման առաջարկ
580008	ա) նյութական աղքատության մակարդակը	ա) նյութական աղքատության (ըստ միջին և ստորին գծերի) և ծայրահեղ աղքատության (ըստ աղքատության պարենային գծի) մակարդակներն՝ ըստ դրամական եկամուտների (ի լրացում ըստ սպառման ագրեգատի աղքատության)	Երևան/այլ քաղաքներ/գյուղ, ՀՀ մարզեր, ըստ դրամական եկամուտների քվինթիլների կամ դեցիլների

*Ամեն տարի, ՏՏԿԱՀ-ում լինում են ընտանիքներ, որ հարցմանը նախորդող 30 օրվա ընթացքում եկամուտ չեն ունեցել, նրանց դրամական եկամուտները =0: Սա հնարավոր է, օրինակ սեզոնային աշխատանքի, գյուղատնտեսական զբաղվածության կամ այլ հանգամանքների բերումով: Օրինակ, 2023 թ.-ի հետազոտությունում այդպիսի 51 ընտանիք կա, որոնց քանակը կշռելուց հետո դառնում է մոտ 8 հազար ընտանիք: Քանի որ 5,184 ընտանիքների

3.Չի ընդունվել:

Աղքատության ոլորտի վիճակագրության սահմանումների, մեթոդաբանության և այլ գործիքակազմի լիազորությունները ՄԱԿ-ի կողմից պատվիրակվել են ՀԲ-ին: Վերջինս, սկսած 1995թ.-ից առ այսօր, Հայաստանին ցուցաբերում է կազմակերպական, ֆինանսական և տեխնիկական օժանդակություն աղքատության ոլորտի վիճակագրության ձևավորման և կայացման հարցում: Սկսած առաջին հետազոտությունից, որը տեղի է ունեցել 1996թ. նոյեմբերին, առ այսօր ՀՀ-ում աղքատության ցուցանիշների ստացմանը միտված ՏՏԿԱՀ-ն իրագործվում են ՀԲ-ի մեթոդաբանությամբ և ՀԲ-ի փորձագետների անմիջական մասնակցությամբ և վերահսկողության ներքո: Համաձայն մեթոդաբանության՝ ընդունված է, որ **սպառումը** եկամուտների համեմատությամբ ավելի ճշգրիտ տեղեկություն է ներկայացնում և այդքան էլ զգայուն չէ կարճատև տատանումների նկատմամբ՝ հատկապես **եկամուտների համատարած հայտարարագրման համակարգ չունեցող**, ինչպես նաև ցածր և միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներում, քանզի եկամուտների բացակայությունն ինքնին

հետազոտությունը մեկ տարվա մեջ է ընթանում, այս իրավիճակը տարվա համար ընդհանրացնել չի կարելի, չնայած տվյալ ամսում կարող է տեղի ունեցած լինել: Բոլոր այդ ընտանիքները նույն ամսվա ընթացքում սպառողական ծախսեր են գրանցել: Ուստի, առաջարկվում է այս ընտանիքների համար ըստ եկամուտների աղքատության մակարդակի վերլուծությունները կատարելիս 0-ական եկամուտները փոխարինել իրենց տվյալ ամսվա սպառողական ծախսերով:	դեռևս չի նշանակում **բարեկեցության զրոյական մակարդակ**: Տնային տնտեսություններն (ՏՏ) իրենց ապրուստը հոգում են նաև սեփական արտադրության սննդամթերքի սպառման կամ սպառումը մասնավոր վարկերով ֆինանսավորելու միջոցով: Ընդ որում, Հայաստանում ՏՏ-ների բարեկեցության աստիճանը որոշվում է մեկ չափահաս անձին համարժեք **ընդհանուր ամսական սպառման արժեքով**: ՏՏ սպառման ագրեգացված ցուցանիշը հաշվարկվում է յուրաքանչյուր տարի՝ ելնելով սպառման վերաբերյալ ՏՏԿԱՀ-ի միջոցով հավաքված տվյալներից: ՏՏԿԱՀ-ի միջոցով հավաքվում են տվյալներ ինչպես պարենային, այնպես էլ ոչ պարենային ապրանքների սպառման վերաբերյալ: Ըստ մեթոդաբանության՝ **սպառման ագրեգացված ցուցանիշը** ներառում է նաև սեփական արտադրության ապրանքները, ինչպես նաև մարդասիրական կազմակերպություններից և այլ աղբյուրներից ստացված օգնությունը: Սպառման պարենային և ոչ պարենային բաղադրիչները տարբեր կերպ են գնահատվում: Պարենային բաղադրիչի համար ՏՏ-ներից պահանջվում է լրացնել օրագիր՝ օրական

	սպառված սննդի քանակի վերաբերյալ: Պարենային ապրանքների սպառումն այնուհետև բերվում է գումարային տեսքի՝ յուրաքանչյուր ապրանքի համար նշելով միավոր գինը: Միավոր գները հաշվարկվում են տեղական մակարդակով՝ օգտագործելով փաստացի գնումների վերաբերյալ օրագրում լրացված տեղեկությունները: Ոչ պարենային սպառումը ներառում է ապրանքների և ծառայությունների հետևյալ տեսակները. ալկոհոլային խմիչքներ և ծխախոտ, հագուստ և կոշկեղեն, կենցաղային ապրանքներ, տրանսպորտ, կոմունալ ծառայություններ, հանգստի, կրթության և առողջապահության ծառայություններ: Այն ներառում է նաև անվճար ստացված ոչ պարենային ապրանքների և ծառայությունների սպառման արժեքը: Երկարաժամկետ օգտագործման ապրանքների օգտագործման արժեքը, կամ որ նույնն է՝ SS կողմից գնված և տնօրինվող երկարաժամկետ օգտագործման ապրանքներից ստացված օգուտների արժեքը նույնպես ավելացվում է սպառման ոչ պարենային բաղադրիչին: Սպառման ագրեգատի անվանական ցուցանիշը գների երկչափ դեֆլյատորի միջոցով

	ենթարկվում է դեֆլյացիայի՝ եռամսյակների, մարզերի և քաղաքային ու գյուղական բնակավայրերի միջև գների տարբերություններն արտացոլելու համար: Համախառն սպառման ագրեգատն այնուհետև արտահայտվում է միջին հանրապետական տարեկան գների մակարդակներով: Սպառման ագրեգատը ճշգրտվում է նաև հաշվի առնելով տնային տնտեսության ինչպես մասշտաբից բխող տնտեսումները, այնպես էլ անդամների կազմով պայմանավորված կարիքների տարբերությունը: ՏՏ համախառն սպառումը բաժանելով մեկ չափահաս անձին համարժեք անդամների թվաքանակին՝ ստացվում է ՏՏ սպառման ագրեգատի ցուցանիշը, որի հիման վրա կատարվում է աղքատության և անհավասարության վերլուծությունը: Վերջում նաև կատարվում է ճշգրտում՝ ՏՏ անդամների՝ հարցման ժամանակահատվածում տնից բացակայած օրերի քանակը հաշվի առնելու համար: Վերը նկարագրված ՀԲ-ի կողմից մշակված մեթոդաբանությունը խարսխված է ՀԲ-ի անդամ երկրներում իրականացված հետազոտու-թյունների և ուսումնասիրությունների բազմամյա փորձի վրա և արժանացել է

	համընդհանուր ճանաչման: Այդ մեթոդաբանությամբ իրականացվող հետազոտություններով պարզվում է ՏՏ-ների հենց իրական՝ փաստագրված սպառումը և սպառման վարքագծերը: Դրանով է պայմանավորված, որ բարեկեցությունը կամ աղքատությունը չափելու համար կիրառվում են ոչ թե եկամուտները, ոչ թե ծախսերը, **այլ փաստացի սպառումը**: Ըստ այդմ, անցումային տնտեսությամբ երկրներում, որոնց շարքին է դասվում նաև Հայաստանը, աղքատները կարող են եկամուտ ստանալ նաև գործունեության բազմաթիվ կարճաժամկետ տեսակներից, որոնք չեն արտացոլվում եկամուտներին վերաբերող տվյալներում: Նման հանգամանքներում բարեկեցությունը գնահատվում է ոչ թե տնային տնտեսությունների գործունեության բոլոր տեսակներից ստացվող եկամուտների հանրագումարով, այլ սպառմանն ուղղված ծախսերի հիման վրա: Ընդ որում, հարկ է նկատի ունենալ նաև, որ ՏՏԿԱՀ-ի փաստագրումներով ստացվող սպառման վերաբերյալ տվյալները վերաբերում են այդ թվում նաև ՀՀ գյուղաբնակ վայրերում բնակվող ՏՏ-ների կողմից պարենային զամբյուղում

	ներառված և սպառված ապրանքների/մթերքների ձեռքբերմանը (այդ թվում՝ սեփական արտադրության կամ ապրանքափոխանակության արդյունքում) և/կամ դրանց սուբյեկտիվ գնահատմանը դիտարկվող տնային տնտեսությունների կողմից, ինչն արժեքային արտահայտությամբ տրամաբանորեն կարող է ավելի ցածր լինել, քան այդ ապրանքների շուկայական գներով գնահատված արժեքները: Ամփոփելով վերոգրյալը, տեղեկացվում է, որ ՏՏԿԱՀ-ն, համաձայն **համընդհանուր ճանաչման արժանացած ՀԲ-ի մեթոդաբանության**, ներկայում իրականացվում է **սպառման ագրեգատի հիման վրա**՝ ՏՏԿԱՀ-ի արդյունքում հավաքված փաստագրումներով, ինչը կարող է օգտագործվել նաև սոցիալական ոլորտում քաղաքական որոշումներ կայացնողների կողմից, այդ թվում՝ ըստ անհրաժեշտության Ձեզ տրամադրվող և Ձեր կողմից ՏՏԿԱՀ-ի անվանազերծված բազաներում պարունակվող տեղեկությունների վերլուծության արդյունքներով՝ հաշվի առնելով նաև Մեթոդաբանությամբ ներկայացված խնդրո առարկա ցուցանիշների

ներկայացուցչականությանը վերաբերող սահմանափակումները: Միաժամանակ, ՀՀ-ում եկամուտների համատարած հայտարարագրման համակարգի (ԵՀՀՀ) ամբողջական ներդրման պարագայում, Արմստատը ՀԲ-ի համապատասխան փորձագետների հետ միասին կքննարկի երկրում աղքատության մակարդակի՝ ըստ եկամտային ագրեգատի չափման նպատակահարմարության և հնարավորության վերաբերյալ հարցը՝ հաշվի առնելով նաև ԵՀՀՀ-ի արդյունքում ձևավորվելիք տեղեկությունների կառուցվածքի, ամբողջականության և Արմստատին դրանց հնարավոր հասանելիության ապահովման հետ կապված հիմնախնդիրները:

4. 2023 թ.-ի տվյալների մեր վերլուծությունը վկայում է, որ, եթե դիտարկենք բնակչության մեկ չափահասին հավասարեցված անդամի հաշվով **միայն դրամական եկամուտները**, նույնիսկ առանց 0-ական եկամուտները սպառողական ծախսերով փոխարինելու, ապա ըստ աղքատության միջին և ստորին գծերի եկամտային աղքատության մակարդակը ավելի փոքր կստացվի, քան ըստ սպառողական ագրեգատի աղքատության մակարդակներն են՝

Աղքատության մակարդակն ըստ /բնակչության տոկոս/՝	Ըստ տնօրինվող **դրամական** եկամուտների՝ առանց 0-ական եկամուտները	Ըստ տնօրինվող **դրամական** եկամուտների՝	Ըստ սպառման ագրեգատի, հրապարակված

4.Չի ընդունվել:

Տե՛ս 3-րդ կետի մեկնաբանությունը:

	սպառողական ծախսերով փոխարինելու/	Օ-ական եկամուտները սպառողական ծախսերով փոխարինելով/	
Պարենային գծի (29,786 դրամ)	6,6	5,8	1,1
Ստորին գծի (43,036 դրամ)	12,7	12,0	9,7
Միջին գծի (53,590 դրամ)	18,9	18,4	23,7
Վերին գծի (64,146 դրամ)	26,3	25,8	42,6

- Հաշվարկված է 2023 թ.-ի ՏՏԿԱՀ շտեմարանի հիման վրա

Սա մի կողմից նշանակում է, որ հետազոտվող տնային տնտեսությունների կողմից իրենց դրամական եկամուտները ավելի ճիշտ են ներկայացվում, քան սպառումը, նույնիսկ եթե դրանց (եկամուտների) որոշ մասը թաքցվում է: Իրոք, ըստ նույն ՏՏԿԱՀ տվյալների վերլուծության, ՀՀ 803,327 տնային տնտեսությունների 67,7%-ում մեկ չափահասին հավասարեցված անձի հաշվով ամսական **դրամական** եկամուտը մեծ է եղել մեկ չափահասին հավասարեցված անձի հաշվով սպառումից/ագրեգատից: Հետևաբար, այս ընտանիքների՝ եկամուտների վրա հիմնված կենսամակարդակը ավելի բարձր է եղել, քան սպառողական ագրեգատով հաշվարկվածը: Այնինչ, ըստ սպառման աղքատ (ըստ միջին գծի) ընտանիքների 66,4%-ը ունեցել է աղքատության միջին գծից բարձր մեկ չափահասին հավասարեցված անդամի հաշվով դրամական եկամուտ:

Մյուս կողմից, ըստ եկամուտների պարենային աղքատների ու ստորին գծով աղքատների, ներկայացվածությունն ավելի մեծ է՝ հիմնականում պարենային կամ ծայրահեղ աղքատների հաշվին: Հենց սրանք պետք է լինեն սոցիալական աջակցության քաղաքականությունների թիրախը: **Այստեղից՝**

ա) անհրաժեշտ է վերլուծել նաև ըստ դրամական եկամուտների աղքատությունը ըստ տարբեր գծերի և դրա դրսևորումները,
բ) հարց է առաջանում աղքատության չափման սպառման ագրեգատի վրա հիմնված մեթոդաբանության վերանայման վերաբերյալ:

5. Սոցիալական տրանսֆերտների, մասնավորապես ԸԿԲՈՒՆ ազդեցությունը աղքատության կրճատման վրա:

Այս վերլուծությունը հրապարակվում է «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» հրապարակման 4-րդ գլխում: Այս բաժինը կարևորվում է աղքատության նվազեցմանն ուղղված պետական քաղաքականությունների արդյունավետության գնահատման տեսանկյունից:

Առաջարկվում է՝

1) Ի լրումն աղյուսակ 4.1-ի՝

Աղյուսակ 4.1.Հայաստան. Շահառուների համախառն սպառման մեջ սոցիալական տրանսֆերտների մասնաբաժինը, 2023թ.

Հրապարակել հետևյալ աղյուսակը՝ Շահառուների՝ մեկ չափահասին հավասարեցված անդամի հաշվով դրամական եկամուտների մեջ սոցիալական տրանսֆերտներից եկամուտների, մասնավորապես ընտանեկան նպաստից, այլ սոցիալական դրամական աջակցությունից և կենսաթոշակից ստացվող եկամուտի մասնաբաժինը (ընդամենը և ըստ դրամական եկամուտների քվինթիլների կտրվածքով):

	Տվյալ տեսակի տրանսֆերտը ստացող տ/տ-երում մեկ չափահասին հավասարեցված	Այդ թվում՝ ըստ դրամական եկամուտների ձևավորված քվինթիլներում

5.

1) Ընդունվել է:

«Շահառուների համախառն սպառման մեջ սոցիալական տրանսֆերտների մասնաբաժինը» և 4.2՝ «Նպաստառու տնային տնտեսություններում մեկ շնչի հաշվով միջին սոցիալական տրանսֆերտները» աղյուսակները «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2026» վիճակագրական-վերլուծական զեկույցում կհրապարակվեն հայցվող մանրամասնությամբ:

	անդամի հաշվով դրամական եկամուտների մեջ տվյալ տեսակի տրանսֆերտից եկամտի տոկոսը	1	2	3	4	5
Կենսաթոշակ						
Ընտանեկան նպաստ						
Այլ սոցիալական դրամական աջակցություն						
Ընդամենը սոցիալական տրանսֆերտներ						

2) Ի լրումն աղյուսակ 4.2-ի՝

Աղյուսակ 4.2. Հայաստան. Նպաստառու տնային տնտեսություններում մեկ շնչի հաշվով միջին սոցիալական տրանսֆերտները, 2023թ.

Հրապարակել հետևյալ աղյուսակը՝

	Տվյալ տեսակի տրանսֆերտը ստացող տ/տ-երում մեկ չափահասին հավասարեցված անդամի հաշվով տվյալ տեսակի տրանսֆերտից եկամտի միջին չափը, դրամ	Այդ թվում՝ ըստ դրամական եկամուտների ձևավորված քվինթիլներում				
		1	2	3	4	5
Կենսաթոշակ						
Ընտանեկան նպաստ						
Այլ սոցիալական դրամական աջակցություն						
Ընդամենը սոցիալական տրանսֆերտներ						

2) Ընդունվել է:

Տե՛ս 5-րդ կետի 1-ին ենթակետի մեկնաբանությունը:

3) Ավելացնել հետևյալ աղյուսակները՝

Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների և բնակչության բաշխումն ըստ մեկ չափահասին հավասարեցված անդամի հաշվով «նախանպաստային» և «հետնպաստային» դրամական եկամուտների հիման վրա ձևավորված աղքատության խմբերի:

	Ընդամենը, որից՝	«նախանպաստային» եկամտային աղքատներ			
		Ըստ վերին գծի	Ըստ միջին գծի	Ըստ ստորին գծի	Ըստ պարենային գծի
Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսություններ, քանակ					
Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսություններ, %	100.0				
Ընտանեկան նպաստ ստացող բնակչություն, %	100.0				

	Ընդամենը, որից՝	«Հետնպաստային» եկամտային աղքատներ			
		Ըստ վերին գծի	Ըստ միջին գծի	Ըստ ստորին գծի	Ըստ պարեն ային գծի
Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսություններ, քանակ					
Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսություններ, %	100.0				
Ընտանեկան նպաստ ստացող բնակչություն, %	100.0				

3) Չի ընդունվել:

Նշվածը թղթակցում է 3-րդ և 4-րդ կետերով ներկայացված առաջարկություններին և դրանց չընդունման վերաբերյալ Արմստատի կողմից ներկայացված համապատասխան պարզաբանումներին:

Ըստ որում, այս աղյուսակները պետք է հրապարակման մեջ ներառվեն նաև ըստ սպառման աղքատության խմբերով:

Ընտանեկան նպաստ ստացող բնակչության բաշխումն ըստ մեկ չափահասին հավասարեցված անդամի հաշվով «նախանպաստային» և «հետնպաստային» դրամական եկամուտների հիման վրա ձևավորված քվինթիլների:

	Ընդամենը,	«Նախանպաստային» եկամտային քվինթիլներ				
		1	2	3	4	5
Ընտանեկան նպաստ ստացող բնակչություն, %	100.0					
		«Հետնպաստային» եկամտային քվինթիլներ				
Ընտանեկան նպաստ ստացող բնակչություն, %	100.0					

Չափահասին հավասարեցված մեկ անձի հաշվով «նախանպաստային» եկամուների հիման վրա ձևավորված քվիթիլներում ընտանեկան նպաստ ստացող բնակչության և ընտանեկան նպաստների տեսքով ստացվող եկամուտների ներկայացվածությունը, տոկոս

	«Նախանպաստային» եկամտային քվինթիլներում ընտանեկան նպաստ ստացող բնակչության և նպաստներին ուղղվող դրամական միջոցների տոկոսը/մասնաբաժինը				
	1	2	3	4	5
Ընտանեկան նպաստ ստացող բնակչություն, %					
Ընտանեկան նպաստներին ուղղվող միջոցներ, %					

6. Առաջարկվում է նաև. 1) նախագծում ներառել հայրության արձակուրդից օգտված աշխատողների վերաբերյալ վիճակագրական տվյալները ևս՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի՝ տարեկան կտրվածքով:	**6.** **1) Ընդունվել է:** Հայրության արձակուրդից օգտված աշխատողների թվաքանակի վերաբերյալ վիճակագրական ցուցանիշը տարեկան հաճախականությամբ կհրապարակվի «Աշխատանքի շուկան Հայաստանում» վիճակագրական ժողովածուի «Աշխատավարձ, աշխատողների թվաքանակ և կազմակերպությունների թիվ» հատվածում՝ հայցվող մանրամասնեցմամբ: Որպես նշված ցուցանիշի հաշվարկման աղբյուր կկիրառվի ՊԵԿ-ի վարձու աշխատողների եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տվյալների բազան:
2) Միաժամանակ հայտնում եմ, որ ԱՍՀՆ որպես ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման համար լիազոր մարմին, կարևորում է պաշտոնական վիճակագրության հավաքագրման ու մշակման գործընթացում՝ անկախ ոլորտից սեռով տարանջատված տվյալների առկայության ապահովումը:	**2) Ընդունվել է:** Սպառողների կարիքների շարունակական վերլուծության հիման վրա, **սահմանափակ ռեսուրսների պարագայում**, նշանակալիորեն հարստացվել է գենդերային վիճակագրության (այսուհետ՝ **ԳՎ**) ցուցանիշների համակարգը: Ներկայում ևս, Արմստատը հետևողականորեն իրականացնում է աշխատանքներ՝ միտված ԳՎ ցուցանիշների մշակման, արտադրության ու տարածման ընդլայնմանը, ինչպես նաև

	հիմնական շահառուների (այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների) հետ համագործակցության խորացմանը՝ տարեցտարի առաջ մղելով միջազգային չափանիշներին համահունչ ԳՎ զարգացումը: Վերը թվարկված միջոցառումներն իրենց նպաստն են բերել ԳՎ ցուցանիշների մեթոդաբանությունների բարելավմանը, բացակայող ցուցանիշների հաշվարկման հնարավորությունների ընդլայնմանը, ԳՎ արտադրողներ և սպառողներ երկխոսության, համագործակցության շարունակական բարելավմանը: Այդ նպատակով՝ միջազգային կազմակերպությունների գործուն աջակցությամբ նաև, շարունակաբար իրականացվում են քայլեր՝ • ընդլայնելու ԳՎ թեմատիկ ոլորտներն ու ցուցանիշների շրջանակը, • ապահովելու տվյալների մանրամասնեցման ավելի բարձր աստիճան, • բարձրացնելու տվյալների համադրելիությունը և հասանելիությունը, • զարգացնելու տվյալների նոր աղբյուրների կիրառումը կամ առկա աղբյուրներում սեռով տարբերակված տվյալների հավաքումը կամ

	ստացումը: Այս գործընթացում առանձնահատուկ կարևորվում է վարչական ռեգիստրների արդյունավետ օգտագործման դերը՝ ապահովելու իրական ժամանակում սեռով տարբերակված, որակյալ վիճակագրություն, • տվյալների տարածման գործիքների և մեթոդների ժամանակակից պահանջների ապահովմանը՝ դյուրինացնելու տվյալների հասանելիությունը և խրախուսելու դրանց հարմարավետ օգտագործումը: Վերոնշյալից զատ, ԳՎ մշակման, վերլուծության և տարածման գործընթացներն առավել տեսանելի և թափանցիկ դարձնելու նպատակով, Վիճակագրական ծրագրում՝ 2026թ.-ից սկսած, նախատեսվում է առանձնացնել նոր՝ «Գենդերային վիճակագրություն» հատված, որում կներկայացվեն գենդերային վիճակագրության թեմատիկ ոլորտները և ենթաոլորտները, իսկ դրանց ներքո՝ ցուցանիշների հրապարակման հաճախականությունն ու ժամանակացույցը, տվյալների աղբյուրները և հրապարակումների ցանկը: Այնուհանդերձ, վարչական ռեգիստր վարող մարմինների տվյալադարաններում առկա է

	սեռով տարանջատված տվյալների չօգտագործված ներուժ, ինչը նպատակաուղղված համագործակցության և կարողությունների զարգացման միջոցով ժամանակի ընթացքում կարող է հնարավորինս իրացվել: Նման ներուժ առկա է նաև ԱՍՀՆ-ում՝ որպես խնդրո առարկա ԳՎ տվյալների հարուստ շտեմարաններ տնօրինող գերատեսչություն: Արմստատը պատրաստ է սերտ համագործակցության ԱՍՀՆ և այլ շահագրգիռ կառույցների հետ՝ ապահովելու գենդերազգայուն ցուցանիշների հնարավոր ամբողջականությունն ու արդիականությունը:

29. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	**04.08.2025թ.** **01/17.1/6532-2025**
Համաձայն Նախագծի 6.4 կետի՝ վիճակագրական տվյալների անվանումը նշված է «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայություններ», մինչդեռ «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված է «***բարձր տեխնոլոգիաներ***»: Այսինքն, ելնելով վերը նշվածից առաջարկում ենք «Տեղեկատվական տեխնոլոգիաններ» բառերը փոխարինել «Բարձր տեխնոլոգիաններ» բառերով: Միաժամանակ, ելնելով այն հանգամանքից, որ «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» նոր օրենքից բխող որոշակի միջոցառումների, մասնավորապես՝ բարձր տեխնոլոգիաների վարչական	**Չի ընդունվել:** ՏՏ և բարձր տեխնոլոգիաների ոլորտների վիճակագրությունները մեթոդաբանական տեսանկյունից տարբեր են: Այսպես, ՏՏ ոլորտի վիճակագրությունը վարվում է համաձայն ՏՏ ոլորտի տնտեսական գործունեության տեսակների հավաքական խմբավորման, իսկ բարձր տեխնոլոգիաների ոլորտի վիճակագրությունը՝ համաձայն Բարձր

ռեգիստրի վարման հետ կապված գործառույթների լիարժեք իրականացումը դեռևս կարգավորված չէ, ուստի հետագա կիրարկումն ապահովելու և դրանց հիման վրա վիճակագրության ներկայացման նպատակով՝ առաջարկում ենք կազմակերպել աշխատանքային քննարկում՝ Նախագիծը բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասով հասցեական լրամշակելու համար:	տեխնոլոգիաների ոլորտի հավաքական խմբավորումների: Հետևաբար՝ սույն վիճակագրությունները մեթոդաբանական տեսանկյունից տարբերվում են միմյանցից, և Արմստատը խնդրո առարկա երկու վիճակագրությունները վարում ու հրապարակում է (տե՛ս համապատասխանաբար https://armstat.am/file/article/sv_06_25a_6200.pdf, էջ 399 և https://armstat.am/am/?nid=14 հղումները): Հարկ է նշել, որ «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի «Հավելված»-ում ներառված խնդրո առարկա ոլորտի պետական աջակցության ենթակա գործունեության տեսակների ցանկը մասամբ է համապատասխանում ՀՀ ՎՊԽ՝ 2023թ. ապրիլի 14-ի թիվ 09-Ա որոշմամբ հաստատված Բարձր տեխնոլոգիաների ոլորտի վիճակագրության հավաքական խմբավորմանը: Նշվածով պայմանավորված՝ առաջարկվում է կիրառել Արմստատի կողմից հաստատված և միջազգայնորեն ընդունված հավաքական խմբավորումը, հակառակ պարագայում հնարավոր չի լինի ապահովել համադրելիությունը խնդրո առարկա ոլորտի՝

	այլ երկրներում կիրառվող համապատասխան ցուցանիշների հետ: Ըստ անհրաժեշտության Արմստատը պատրաստակամ է սույն խնդրի վերաբերյալ կազմակերպել աշխատանքային քննարկում:
30. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	**01.08.2025թ.** **ԴԽ/15.2/26404-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-
31. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն	**29.07.2025թ.** **01/6-2/16797-2025**
Նախագծին վերաբերող ՀՀ ֆինանսների նախարարության համար կարևորություն ներկայացնող հարցերի վերաբերյալ դիրքորոշումներ ներկայացվել են «Հայաստանի Հանրապետության 2024-2028 թվականների վիճակագրական ծրագրի», ինչպես նաև «2025 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծի շրջանակներում (2023 թվականի հուլիսի 17-ի թիվ 01/6-2/14134-2023, ինչպես նաև 2024 թվականի հուլիսի 29-ի թիվ 01/6-2/16070-2024 գրություններ (կցվում են)), որտեղ ներառված հիմնական կետերը շարունակում են մնալ արդիական (մասնավորապես՝ սոցիալական վիճակը բնութագրող ցուցանիշների հնարավորինս օպերատիվ հրապարակման անհրաժեշտությունը, «Ծախսեր-թողարկում» աղյուսակի և չդիտարկվող տնտեսության գնահատականների հրապարակումը, ինչպես նաև ՀՀ ՎԿ կողմից հրապարակվող բոլոր տվյալների թվային շարքերի Excel ֆորմատով հասանելիության ապահովման միջոցառումները): Հետևաբար, առաջարկում ենք	Արմստատը հայտնում է, որ սույն գրություններին տրված պատասխանները, մասնավորապես «Ծախսեր-թողարկում» աղյուսակի և չդիտարկվող տնտեսության գնահատականների հրապարակումների վերաբերյալ, դեռևս արդիական են և մնում են անփոփոխ (տե՛ս https://www.armstat.am/file/doc/99554118.pdf հղումը, էջ 34-36):

հնարավորության պարագայում Նախագծում անդրադառնալ վերը նշված գրություններով ներկայացված առաջարկներին: **Առդիր 1** ՀՀ վիճակագրական կոմիտեի ս.թ. հունիսի 16-ի թիվ ՎԿ/2-18/1241-2023 գրությամբ ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության 2024-2028 թվականների վիճակագրական ծրագրի» նախագծի կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.	
1.Նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է իրականացնել ազգային հաշիվների համակարգի մեթոդաբանական հենքով համախառն ներքին արդյունքի բացարձակ ծավալի և շարժընթացի հետընթաց վերանայման աշխատանքներ: Այս կապակցությամբ առաջարկում ենք մեծ ծավալի վերանայումներ իրականացնելիս վիճակագրական կոմիտեի կայքէջում հրապարակել նաև իրականացված վերանայումների ընդգրկման ժամանակաշրջանի և վերանայումների իրականացման պատճառների մասին տեղեկատվություն՝ օգտվողների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:	**1.Ընդունվել է ի գիտություն:** Ներկայացված նույնաբովանդակ դիտարկման վերաբերյալ Արմստատը պարզաբանում է ներկայացրել «2025 թվականի վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ ՎՊԻԽ որոշման նախագծի ամփոփաթերթի 31-րդ կետի ներքո (տե՛ս https://armstat.am/file/doc/99554118.pdf հղումը, էջ 32): Ներկայում նշվածի առնչությամբ Արմստատը վերահաստատում է իր դիրքորոշումը և ըստ այդմ ներկայացված դիտարկումներն ընդունում ի գիտություն:
2.ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից բնակչության սոցիալական վիճակը բնութագրող ցուցանիշները (օր.՝ աղքատությունը, Ջինիի գործակիցը և այլն) հրապարակվում են տարվա երկրորդ կեսին կամ տարեվերջին, մինչդեռ բյուջետային գործընթացի շրջանակներում դրանք ունեն առանցքային նշանակություն՝ բնակչության սոցիալական պատկերը գնահատելու և ճիշտ որոշումներ կայացնելու համար: Հատկապես խոսքը վերաբերում է բյուջեի	**2.Չի ընդունվել:** Խնդրո առարկա ցուցանիշների հաշվարկման համար տեղեկատվական աղբյուր հանդիսացող Արմստատի կողմից իրականացվող ՏՏԿԱՀ-ի հավաքվող տվյալների ստուգաճշտումը, համադրումը, վերլուծումն ու ամփոփումը

տարեկան հաշվետվություններին, որոնք ԱԺ են ներկայացվում մինչև յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ը: Այդ փուլում նախորդ տարվա սոցիալական պատկերը ճիշտ հասկանալու, հարկաբյուջետային քաղաքականության ազդեցություններն առավել համապարփակ գնահատելու համար անհրաժեշտ է պատկերացում ունենալ նախորդ տարվա սոցիալական վիճակը բնութագրող ցուցանիշների վերաբերյալ: Հետևաբար, առաջարկում ենք հաշվարկել և հրապարակել դրանք (առնվազն նախնական տարբերակով) առավել օպերատիվ կերպով՝ մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլ ամիսը:	ժամանակատար և մանրակրկիտ աշխատանք պահանջող գործընթաց է և ըստ այդմ խնդրո առարկա աշխատանքի իրականացման ժամկետը հաշվի է առնում Արմստատում ժամանակի, մարդկային ռեսուրսների գործադրման ողջամիտ պայմանները՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները: Բացի այդ, մինչ խնդրո առարկային վերաբերող աշխատանքների ամփոփումը, ստացվող ցուցանիշների մեթոդաբանական համադրելիությունն ու համապատասխանությունն ապահովելու նպատակով ՀԲ-ի փորձագետների կողմից ՏՏԿԱՀ-ի տվյալների անվանազերծված բազաների տվյալները ենթարկվում են դիտարկումների, որոնց արդյունքում վերջիններիս կողմից Արմստատին ներկայացվում են համապատասխան առաջարկություններ և դիտողություններ: Օրինակ, 2024թ. աղքատության ցուցանիշի հաշվարկման համար ՀԲ-ի փորձագետների կողմից Արմստատին առաջարկվել են մեթոդաբանական ճշգրտումներ, որոնց վերաբերյալ մանրամասն քննարկումները նախատեսվում է իրականացնել սույն թվականի սեպտեմբեր ամսին՝ ՀԲ-ի համապատասխան

	փորձագիտական խմբի Հայաստան նախատեսվող այցելության շրջանակներում: Ըստ այդմ, հաշվի առնելով նշվածին վերաբերող նախատեսվող համատեղ աշխատանքների իրականացման ժամկետները, դրանց ծավալն ու ժամանակատարությունը՝ Արմստատի կողմից 2024թ. աղքատության ցուցանիշները նախատեսվում է հրապարակել 2025թ. նոյեմբերին, ինչը համապատասխանում է նաև 2025թ. վիճակագրական ծրագրով նախատեսված ժամանակացույցին: Հետևաբար, աղքատության նախնական ցուցանիշների հրապարակումը մինչ դրանց վերջնական ճշգրտումները՝ այդ թվում ՀԲ-ի համապատասխան փորձագետների առաջարկությունների հիման վրա, Արմստատը նպատակահարմար չի համարում: Անկախ վերոգրյալից, տեղեկացվում է նաև, որ խնդրո առարկա աղքատության ցուցանիշների վերջնական ամփոփումների իրականացման և դրանց առավել վաղ ժամկետում հրապարակման հնարավորության պարագայում, Արմստատը պատրաստակամ է դրանք հրապարակել առավել սեղմ ժամկետում՝ անկախ վիճակագրական ծրագրերով

	նախատեսվածից և նշվածի վերաբերյալ Ձեզ լրացուցիչ տեղեկացնել:
3.ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված հավելված 1-ի «Ֆինանսների նախարարություն» բաժնի «31.2 Խոշոր հարկատեսակների (ԱԱՀ, եկամտային հարկ, շահութահարկ) գծով հարկային ներուժի և ճեղքի (ներուժային մակարդակից հեռացվածության) գնահատումների իրականացում» միջոցառման կատարման շրջանակներում կարևորում ենք ՀՀ ՎԿ կողմից ստորև ներկայացված տեղեկատվության հրապարակումը.	**3.**
1) «Ծախսեր-թողարկում» աղյուսակ: Սույն աղյուսակի հրապարակումը կարևորվում է ՀՀ հարկային ներուժի և ճեղքի առավել ճշգրիտ ու ընդգրկուն գնահատականներ ստանալու և հարկային համակարգի հիմնական խոցելի կողմերի բացահայտման ու որոշակի ճշտգրտող գործիքակազմի կիրառման միջոցով հարկային համակարգի արդյունավետությունը բարձրացնելու համատեքստում: Հարկ ենք համարում ընդգծել, որ հարկային ներուժի և ճեղքի գնահատման հաշվարկներում «Ծախսեր-թողարկում» աղյուսակի առանձին բաղադրիչների ներառման կարևորությունը մատնանշվում է նաև տնտեսագիտական գրականությունում առկա ուղենշային հանդիսացող մի շարք աղբյուրներում:	**1) Չի ընդունվել:** Ներկայացված նույնաբովանդակ դիտարկման վերաբերյալ Արմստատը պարզաբանում է ներկայացրել «2025 թվականի վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ ՎՊԻՆ որոշման նախագծի ամփոփաթերթի 31-րդ կետի ներքո (տե՛ս https://armstat.am/file/doc/99554118.pdf հղումը, էջ 34-35):
2) Չդիտարկվող տնտեսության գնահատականներ: Հարկային պոտենցիալի հաշվարկներում որոշակի դեր ունեն նաև չդիտարկվող տնտեսության գնահատականները: Մասնավորապես, ներկայումս ՀՀ ՖՆ-ում կիրառվող՝ ՀՀ ֆինանսների նախարարի ս.թ. ապրիլի 27-ի 193-Լ հրամանով հաստատված	**2) Չի ընդունվել:** Ներկայացված նույնաբովանդակ դիտարկման վերաբերյալ Արմստատը պարզաբանում է ներկայացրել «2025 թվականի վիճակագրական

մեթոդաբանությունը ներառում է ՀՆԱ հաշվարկի հիմքում ընկած չդիտարկվող և ստվերային տնտեսության NACE դասակարգմամբ ոլորտային գնահատականների օգտագործում, որը ներկայումս ստացվում է ՀՀ ՎԿ-ին առանձին ուղղվող նամակների միջոցով: Հետևաբար, կարևոր ենք համարում այդ ցուցանիշի պարբերական (առնվազն՝ տարեկան) հրապարակումը, ինչը ոչ միայն առավել օպերատիվ կդարձնի հարկային պոտենցիալի գնահատումները, այլ նաև կարևոր կլինի ինչպես այդ գնահատումների, այնպես էլ՝ ընդհանրապես վիճակագրության թափանցիկության տեսակետից:

4. Հատնում ենք նաև, որ ՀՀ տնտեսության ներկա վիճակը վերլուծելու և գնահատելու նպատակով խնդիր է առաջացել ուսումնասիրել և վերլուծել պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի (այդ թվում՝ ոչ ռեզիդենտ) թվաքանակը և շարժը, ուստի առաջարկում ենք հավաքագրել և հրապարակել տեղեկատվություն՝ պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի թվաքանակի վերաբերյալ՝ համաձայն կից ներկայացված ձևաչափի:

Պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի թվաքանակի վերաբերյալ

	2021 (ըստ ամիսների)	*2022 (ըստ ամիսների)*	*2023 (ըստ ամիսների)*
Ընդամենը			
1. Իրավաբանական անձինք, *այդ թվում՝*			
1.1. Ռեզիդենտների կողմից գրանցված			

ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ ՎՊԻՄ որոշման նախագծի ամփոփաթերթի 31-րդ կետի ներքո (տե՛ս https://armstat.am/file/doc/99554118.pdf հղումը, էջ 35-36)**:**

4.Չի ընդունվել:

Պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի քանակի վերաբերյալ տեղեկությունը իր բովանդակությամբ դասվում է վարչական բնույթի տեղեկությունների շարքին, որոնց վերաբերյալ հաշվառումների իրականացումը դուրս է Օրենքով և վիճակագրական ծրագրերով սահմանված Արմստատի գործառույթների շրջանակից: Նշված տեղեկությունների գրանցում/հաշվառում և դրանց հիման վրա վարչական տեղեկատվական շտեմարաններ վարող պետական լիազոր մարմինը Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունն է, որին էլ

1.2. Ոչ ռեզիդենտների կողմից գրանցված, *այդ թվում՝*			
1.2.1. ՌԴ քաղաքացիների կողմից գրանցված			
2. Անհատ ձեռնարկատերեր, *այդ թվում՝*			
2.1. Ռեզիդենտների կողմից գրանցված			
2.2. Ոչ ռեզիդենտների կողմից գրանցված, *այդ թվում՝*			
2.2.1. ՌԴ քաղաքացիների կողմից գրանցված			

առաջարկվում է դիմել՝ խնդրո առարկա տեղեկությունների ստացման նպատակով:

5. Հաշվի առնելով, որ ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատ) պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվող տվյալների բազաներում բացակայում են որոշակի տվյալներ, որոնք կարող են ավելի արդյունավետ դարձնել ֆիսկալ ռիսկերի կառավարումը՝ առաջարկում ենք Նախագծով մշակել նաև ստորև ներկայացված ուղղություններով տեղեկատվության հրապարակման բարելավմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես՝

5.

1) կանաչ պարտատոմսերի թողարկման ծավալների վերաբերյալ տեղեկատվություն՝ հաշվի առնելով, որ մի շարք գործառույթների արդյունավետ իրականացման նպատակով աշխատանքային անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել և տեղեկատվություն հավաքագրել ՀՀ-ում մասնավոր հատվածի կողմից թողարկվող կանաչ պարտատոմսերի ծավալների մասին, որոնք առկա չեն մեկ ամբողջական տեղեկատվական հարթակում,

1) Չի ընդունվել:

Ներկայացված նույնաբովանդակ դիտարկման վերաբերյալ Արմստատը պարզաբանում է ներկայացրել «2025 թվականի վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ ՎՊԻՄ որոշման նախագծի ամփոփաթերթի 31-րդ կետի ներքո (տե՛ս https://armstat.am/file/doc/99554118.pdf հղումը, էջ 37):

2) կլիմայական ռիսկերից բխող աղետների մասշտաբների և վնասների (նյութական և ֆինանսական) վերաբերյալ տեղեկատվություն, ինչը հավաքագրվում է համապատասխան լիազոր մարմինների կողմից.	**2) Չի ընդունվել:** Արմստատը սկսած 2024թ.-ից «Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական ժողովածուում հրապարակում է տեղեկություն տարերային վտանգավոր երևույթների հետևանքով հասցված նյութական վնասների մասին, իսկ ֆինանսական վնասների վերաբերյալ տեղեկությունն ամբողջական չէ և Արմստատը նպատակահարմար չի համարում այն հրապարակել (տե՛ս https://www.armstat.am/file/article/eco_book_2023_14.pdf հղումը, էջ 213-214): Տեղեկության աղբյուրը Ներքին գործերի նախարարությունն է:
3) ջերմոցային գազերի արտանետումների ծավալները ըստ ոլորտների՝ 2018 թվականից սկսած:	**3) Չի ընդունվել:** Արմստատը ջերմոցային գազերի արտանետումների ծավալների մասին տեղեկությունն ըստ ոլորտների հրապարակում է Արմստատբանկում (տե՛ս https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__8%20Environment__(B)%20Climate%20change__(B3)%20Greenhouse%20gas%20emissions/EE-b3-2.px/table/tableViewLayout1/?rxid=9ba7b0d1-2ff8-

Առդիր 2 1. ՀՀ վիճակագրական կոմիտեի ս.թ. հունիսի 17-ի թիվ ՎԿ/2-18/1033-2024 գրությամբ ներկայացված՝ «2025 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը: Նախագծին վերաբերող ՀՀ ֆինանսների նախարարության համար կարևորություն ներկայացնող հարցերի վերաբերյալ դիրքորոշում ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության 2024-2028 թվականների վիճակագրական ծրագրի» նախագծի շրջանակներում (2023 թվականի հուլիսի 17-ի թիվ 01/6-2/14134-2023 գրություն (կցվում է)), որտեղ ներառված հիմնական կետերը շարունակում են մնալ արդիական (մասնավորապես՝ սոցիալական վիճակը բնութագրող ցուցանիշների հնարավորինս օպերատիվ հրապարակման անհրաժեշտությունը, «Ծախսեր-թողարկում» աղյուսակի և չդիտարկվող տնտեսության գնահատականների հրապարակումը): Հետևաբար, առաջարկում ենք հնարավորության պարագայում Նախագծում անդրադառնալ վերը նշված գրությամբ ներկայացված առաջարկներին:	40fa-a309-fae01ea885bb հղումը) և «Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական ժողովածուում (տե՛ս https://www.armstat.am/file/article/eco_book_2023_7.pdf հղումը, էջ 87): Տվյալներն առկա են սկսած 1990թ.-ից: Տեղեկության աղբյուրը Շրջակա միջավայրի նախարարությունն է (ՇՄՆ): **1. Չի ընդունվել:** Ներկայացված նույնաբովանդակ դիտարկման վերաբերյալ Արմստատը պարզաբանում է ներկայացրել «2025 թվականի վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ ՎՊԻՄ որոշման նախագծի ամփոփաթերթի 31-րդ կետի ներքո (տե՛ս https://armstat.am/file/doc/99554118.pdf հղումը):

2. Առաջարկում ենք նաև Նախագծով նախատեսել ՀՀ ՎԿ կողմից հրապարակվող բոլոր տվյալների թվային շարքերի Excel ֆորմատով հասանելիության ապահովման միջոցառումներ: Մասնավորապես՝ կիրառման տեսանկյունից արդյունավետ կլինի ՀՀ ՎԿ կայքում ունենալ նաև ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը ներկայացնող հրապարակումներում ներառված բոլոր ցուցանիշների թվային շարքերը: Միաժամանակ առաջարկում ենք Excel ֆայլերը հրապարակել կիրառման տեսանկյունից հարմարավետ տեսքով, մասնավորապես՝ առանց վանդակների միավորման (merged cells), ինչպես նաև պահպանել տվյալների բազաներում հրապարակվող Excel ֆայլերի անվանման անընդհատությունը (օրինակ՝ ՀՆԱ-ի, ՏԱՑ-ի բազաների Excel ֆայլերի անվանումները ամեն հրապարակումից հետո փոփոխվում են): Վերջինիս անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ ՎԿ կայքից տվյալների ներբեռնման և վերլուծության ինքնաաշխատ համակարգերի ներդրման և արդյունավետ գործարկման հանգամանքով:	**2. Ընդունվել է ի գիտություն:**
3. Նախագծի Մաս 1-ի 1.3 «Գներ և Սակագներ» բաժնի 1.3.5՝ «Շինարարության գների և ինդեքսներ» ենթահատվածում կիրառվում են ինդեքսներ, որոնք տրամադրվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից և հաշվարկվում են բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ ամսական ինդեքսների հիման վրա: Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 25-ի «Պետական կարիքների համար իրականացվող կապիտալ ծախսերի հաշվարկի հիմքում դրվող ապրանքատեսակների կողմնորոշիչ գների և շինարարության ոլորտում գների ինդեքսների հաշվարկման կարգը հաստատելու մասին» թիվ 472-Ն որոշման կարգի 16-րդ կետի համաձայն՝ տեխնիկական հատկանիշների, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է տնտեսավարող սուբյեկտների կողմից տրամադրված գրավոր կամ բանավոր տեղեկատվության	**3. Չի ընդունվել:** Արմստատը ողջունում է Ֆինանսների նախարարության (ՖՆ) կողմից իրականացվող քայլերն՝ ուղղված շինանյութերի գների (ինչի վրա հիմնվելով նախարարության կողմից հաշվարկվում է շինարարության գների ինդեքսը) մասին ավելի ճշգրիտ և արժանահավատ տեղեկություն հավաքելուն: Միաժամանակ, կրկին նշվում է, որ շինարարության գների ինդեքսը՝ հանդիսանալով վիճակագրական

հիման վրա և նախարարությունը պատասխանատվություն չի կրում դրանց ճշտության համար: Այդ իսկ պատճառով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ հաշվարկվող ամսական ինդեքսների հիման վրա կատարված հաշվարկները ոչ միշտ կարող են ճշգրիտ կերպով արտացոլել պատկերը, քանի որ տվյալ ինդեքսները հաշվարկվում են «Շինարարական նյութերի, կոնստրուկցիաների և պատրաստվածքների կողմնորոշիչ գների» հիման վրա: Հայտնում ենք, որ պետական կարիքների համար ապրանքների կողմնորոշիչ գների սահմանման նպատակով տեղեկությունների հավաքագրման, ինչպես նաև պետական կարիքների համար իրականացվող կապիտալ ծախսերի հաշվարկի հիմքում դրվող ապրանքատեսակների կողմնորոշիչ գների և շինարարության ոլորտում գների ինդեքսների հաշվարկման և հրապարակման գործընթացում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից արձանագրվել են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ • Շինարարական ապրանքներ ներմուծող կամ արտադրող կազմակերպությունների տրամադրած տեղեկատվությունը չի հսկվում պետական մարմինների կողմից և հաճախ գնացուցակում կտրուկ տատանման հետևանքով առաջացնում են մի շարք խնդիրներ: • Գնային տեղեկատվություն տրամադրող ընկերությունների համար չկա սահմանված որևէ օրենսդրական ակտ, որի հիման վրա կազմակերպությունները պարտավորվում են յուրաքանչյուր ամիս (կիսամյակ / տարի) ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել կողմնորոշիչ գներ: Այս հանգամանքով պայմանավորված ընկերությունների տվյալ ցանկից դուրս գալու պարագայում, առկա է ռիսկ, որ տվյալ ապրանքի գծով գնառաջարկ չներկայացվի: • Հնարավոր են դեպքեր, երբ կազմակերպությունները փոխհամաձայնության գալով արհեստականորեն բարձրացնեն	կարևորագույն ցուցանիշներից մեկը, կիրառվում է որպես ՀՆԱ-ի շինարարության ոլորտի դեֆլյատոր, ինչպես նաև համադրելի գներով շինարարության ոլորտի ծավալները վերահաշվարկելու և իրական աճը գնահատելու գործիք: Ելնելով վերը նշվածից և ընդունելով նախարարության կողմից մշակված նոր նախագծի շրջանակներում շինարարական նյութերի/ապրանքատեսակների գների վերաբերյալ տեղեկության փոխարեն հիմնավորող փաստաթղթերով շուկայի ուսումնասիրության արդյունքում արձանագրված գներ հավաքելուն, Արմստատն ակնկալում է ՖՆ-ի կողմից ստանալ շինարարության գների ինդեքսներն ամսական հաճախականությամբ՝ սահմանված ժամանակացույցի համաձայն:

ապրանքատեսակի գինը, որը նույնպես ակնհայտ կոռուպցիոն ռիսկ է ենթադրում, որը սակայն ֆիզիկապես հնարավոր չէ վերահսկել: Հիմք ընդունելով վերոնշյալը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել է նախագիծ, որի ընդունման արդյունքում կազատականացվի ոլորտը և ՀՀ ֆինանսների նախարարության կայքէջում (minfin.am) յուրաքանչյուր ամիս հրապարակվող շինարարական նյութերի / ապրանքատեսակների գների վերաբերյալ տեղեկատվության փոխարեն հնարավոր կլինի կիրառել շուկայի ուսումնասիրության արդյունքում արձանագրված տվյալներն ու գները՝ հիմնավորող փաստաթղթերով: Միաժամանակ, հնարավորություն կտրվի լիազոր մարմնին մշակելու ներկայիս գործող համակարգից սկզբունքորեն տարբերվող նոր համակարգ, որը առավելագույնս կարտացոլի շուկայական տնտեսության պայմաններում գների ձևավորման մոտեցումները՝ հիմք ընդունելով շուկայի զարգացման տեմպերն ու դինամիկ աշխարհում թվային տեխնոլոգիաների ու նորարարությունների կիրառման անհրաժեշտությունը:	
32. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն	**04.08.2025թ.** **43/2/202017-25**
1.Ծրագրի 6-րդ մասի 6.7.2 բաժնի 90-րդ կետում նշված «Քրեական պատասխանատվության ենթարկված անձանց թվաքանակն ըստ հանցատեսակների» վիճակագրական տվյալը, քննարկումների արդյունքում, 2024 թվականից ներառվել է նույն բաժնի 89-րդ կետում նշված՝ «Հանցագործություններ» վիճակագրական տվյալի տարեկան տեղեկագրի մեջ /Արմստատին վիճակագրական տվյալի տրամադրման հաշվետվության ձև/: Բացի այդ, հաշվետվությունում ներկայացվող տեղեկություններն առավել մանրամասն և տարանջատված՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, ներառված են նաև նույն բաժնի 88-րդ կետում /հանցագործությունների քանակն ըստ	**1.Ընդունվել է:** Նախագծում իրականացվել է համապատասխան փոփոխություն:

հանցատեսակների/ նշված «Ձև 1-հանցագործություն» ամենամսյա հաշվետվության բաժին 3-ում և բաժին 4-ում: Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկում ենք 6-րդ մասի 6.7.2 բաժնից հանել 90-րդ կետը: 2. Ծրագրի 6-րդ մասի 6.7.2 բաժնի 96-99-րդ կետերում ոստիկանության կողմից ներկայացվող վիճակագրական տվյալների ցանկում առկա են տվյալներ, որոնց վերաբերյալ գործառույթները ներքին գործերի նախարարության կազմավորմամբ պայմանավորված իրականացնում է ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է նշված կետերը տեղափոխել 6.7.1 բաժին /միգրացիայի և քաղաքացիության ծառայություն/՝ փոխելով համարակալումը:	**2.Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
33. Հայաստանի Հանրապետության ոստիկանություն	
Չի ներկայացվել	
34. Հայաստանի Հանրապետության միգրացիայի և քաղաքացիության ծառայություն	**29.07.2025թ.** **42/94/5/196142-25**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-
35. Հայաստանի Հանրապետության փրկարար ծառայություն	**22.07.2025թ.** **44/95/5/190059-25**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-
36 Հայաստանի Հանրապետության միասնական սոցիալական ծառայություն	**01.07.2025թ.** **01/ՆԱ/37212-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-

37. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի կոմիտե	**30.07.2025թ.** **1.1/12.5/3443-2025**
1.«2026 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծի 73-րդ գլխի 7-րդ մասի՝ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) բաժնից առաջարկում ենք հանել 7.14.3 կետի 116-րդ ենթակետը, քանի որ Կոմիտեն Ձև 1-ԱՊ (աշխատանքի պայմաններ) տարեկան հաշվետվություն լրացնելու պարտավորություն չունի՝ «Հայաէրոնավիգացիա» և «Ավիաբուժ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ների կառավարման բարձրագույն մարմնի փոփոխությամբ պայմանավորված: 2.Միաժամանակ, հաշվի առնելով, որ 119-րդ և 120-րդ ենթակետերով սահմանված՝ շինարարության ոլորտի Ձև 2-ԿՇ (ամսական) և Ձև 2-ԿՇ (տարեկան) հաշվետվությունները երբևէ Կոմիտեի կողմից լրացնելու պարտավորություն չի եղել, առաջարկում ենք հանել նախագծից:	**1.Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Տեղեկացվում է նաև, որ «Հայաէրոնավիգացիա» և «Ավիաբուժ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ները սահմանված կարգով կշարունակեն ներկայացնել աշխատանքային պայմանների վերաբերյալ Ձև 1-ԱՊ տարեկան հաշվետվությունը: **2. Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
38. Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտե	**24.06.2025թ.** **01/09.9/4768-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-
39. Հայաստանի Հանրապետության ջրային կոմիտե	**19.06.2025թ.** **01/06/2910-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-
40. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն	**14.07.2025թ.** **11/910**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-

41. Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայություն	**31.07.2025թ.** **Ե/1661-25**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-
42. Պետական եկամուտների կոմիտե	
Չի ներկայացվել	
43. Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե	**30.07.2025թ.** **ՍԹ/14576-2025**
1.Նախագծի 1-ին մասի «Պաշտոնական վիճակագրությունն ըստ տնտեսության հատվածների, ենթահատվածների և ոլորտների 1. Իրական հատված. 1.1. Ազգային հաշիվներ» վերտառությամբ, աղյուսակի չորրորդ սյան «ընդգրկվածությունը (ըստ ոլորտի, գործունեության տեսակի, տարածքային բաշխվածության աշխատողների թվաքանակի և այլն)» բաժնում հիմնականում ներկայացվում է տեղեկատվության տարածքայնությունը, որն արտացոլում է տվյալներին վերաբերող տարածական շրջանակը: Թեև այս տվյալները, ըստ էության, տարածական բնույթ ունեն, դրանք չեն ներկայացվում համապատասխան քարտեզագրական շերտերի տեսքով: Միջազգային առաջատար փորձը փաստում է, որ տարածական և վիճակագրական տվյալների ինտեգրումն էապես բարձրացնում է դրանց կիրառելիությունն ու արդյունավետությունը: Այս համատեքստում առաջարկում ենք Նախագծի շրջանակում հնարավորինս ապահովել տեղեկատվության ներկայացումը քարտեզագրական շերտերի միջոցով:	**1.Ընդունվել է ի գիտություն:** Ներկայացված առաջարկությունները՝ կապված քարտեզային ձևաչափով պաշտոնական վիճակագրության տարածման հետ ընդունելի են այնքանով, որքանով դրանք չեն հակասում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին 1)-ին կետով սահմանված «Պրոֆեսիոնալ անկախության» սկզբունքի պահանջներին, համաձայն որոնց՝ «... պաշտոնական վիճակագրություն արտադրողները ... **տարածման բոլոր ձևերի ժամկետների և բովանդակության** հետ կապված իրենց որոշումները կայացնում են անկախ և առանց քաղաքական կամ այլ արտաքին աղբյուրներից որևէ ճնշման և միջամտության:», ինչպես նաև Օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթներին, համաձայն որոնց՝ «Պաշտոնական վիճակագրության տարածումն

	ուղեկցվում է մեթատվյալներով և բացատրական մեկնաբանություններով, **իսկ հասանելիությունն ապահովվում է վիճակագրական կոմիտեի և պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների պաշտոնական կայքերում հրապարակվելու միջոցով**:»: Արմստատի քարտեզագրական շերտերի միջոցով տեղեկությունների ներկայացման հետ կապված նախատեսվող աշխատանքների վերաբերյալ պարզաբանումները տե՛ս 2-րդ կետի ներքո:
2.Հատկանշական է, որ Նախագծի 8-րդ մասի՝ «Արմստատի տեղեկատվական ռեսուրսների և տեխնոլոգիաների ներդրում ու զարգացում» վերտառությամբ, 5-րդ կետով արդեն իսկ նախատեսվում է GIS տեխնոլոգիաների ներդրման աշխատանքների նախագծում և իրականացում: Այս առումով կարևոր է հաշվի առնել ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Տարածական տվյալների ստանդարտացման ուղեցույցները հաստատելու մասին» N 1569-Ն որոշման դրույթները, մասնավորապես 3-րդ հավելվածով սահմանված թեմատիկ տարածական տվյալների շերտերը: Որոշմամբ նախատեսված թեմատիկ խմբերի ատրիբուտային տեղեկատվությունը կարող է արդյունավետորեն ինտեգրվել վիճակագրական տեղեկատվությանը, իսկ վիճակագրական տվյալները կարող են հիմք հանդիսանալ նոր թեմատիկ շերտերի ստեղծման համար: Նախագծի 9-րդ մասի՝ «Պետական վիճակագրության հիմնական մշակումներ» վերտառությամբ 9.9. «Տարածքային վիճակագրություն» ենթագլխում հղում է	**2. Ընդունվել է ի գիտություն:** Արմստատում տարածական տվյալների հետ աշխատանքը կառուցվում է միջազգային լավագույն փորձի և INSPIRE մոտեցման համաձայն: Արմստատի գործառույթները չեն ներառում քարտեզագրական շերտերի ստեղծում, թարմացում կամ փոփոխում. այդ պատասխանատվությունը սահմանված է իրավասու մարմինների վրա, ներառյալ Կադաստրի կոմիտեն, ըստ ՀՀ կառավարության 06.10.2022թ. N1569-Ն որոշման: Միջազգային փորձի համաձայն ազգային վիճակագրական ծառայությունները (NSI/NSO)

կատարվում մարզային կտրվածքով վիճակագրական տեղեկատվության քարտեզային ներկայացմանը: Սակայն, փաստացի տարածական տվյալների փոխարեն ներկայացված է միայն ՀՀ ընդհանրական քարտեզ՝ համապատասխան մարզերի վերաբերյալ տեքստային (PDF) տեղեկատվության հղումներով: Առաջարկում ենք այդ տեղեկատվությունն առավել կիրառելի դարձնելու նպատակով այն ներկայացնել իրական տարածական տվյալների շերտի տեսքով, իսկ վիճակագրական ցուցանիշները ներկայացնել շերտի ատրիբուտային տվյալների ձևաչափով: Նշված առաջարկը համահունչ է ՀՀ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի շրջանակում արդեն ներդրված ազգային գեոպորտալի գործառնական սկզբունքներին, ինչը հնարավորություն է տալիս տարբեր գերատեսչությունների կողմից վարվող տարածական տվյալները հասանելի դարձնելու միասնական հարթակի միջոցով: Միաժամանակ Նախագծի 9.18-րդ ենթակետով հղում է կատարվում «Աշխարհատարածական (քարտեզների) ձևաչափով վիճակագրական արտադրանքների տարածման մեթատվյալներին», որի համաձայն՝ քարտեզները կառուցվել են QGIS համակարգչային ծրագրով: Այս համատեքստում կարևոր է նշել, որ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից 2024 թվականին ընդունվել և 2025 թվականի հունվարի 1-ից գործարկվել են երկրատարածական տվյալների վերաբերյալ 12 ազգային ստանդարտներ: Մասնավորապես ՀՍՏ 452-2024 «Կադաստր. Երկրատարածական տվյալներ. Մետատվյալներ» ազգային ստանդարտը սահմանում է երկրատարածական տվյալների մետատվյալների վարման ստանդարտը, իսկ ՀՍՏ 445-2025 «Կադաստր. Երկրատարածական տվյալներ. Տվյալների որակ» ազգային ստանդարտը սահմանում է երկրատարածական տվյալների որակի ազգային ստանդարտը:	հիմնականում ինտեգրում են վիճակագրությունն առկա պաշտոնական տարածական շերտերի վրա, առանց նոր շերտերի ստեղծման ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում (NSDI): Ինչպես նշվել է դիտարկումներում, նախագծի 8-րդ մասի 5-րդ կետով արդեն իսկ նախատեսվում է GIS տեխնոլոգիաների ներդրման նախագծում և իրականացում: Այդ համատեքստում Արմստատը վիճակագրական տվյալների քարտեզագրական ներկայացումը կիրականացնի նոր կայքում ներդրվելիք GIS տեխնոլոգիաների միջոցով՝ ինտերակտիվ քարտեզների և վահանակների տեսքով: Այս լուծումները կկառուցվեն Գեոպորտալի հասանելի պաշտոնական բազային քարտեզագրական շերտերի վրա, իսկ վիճակագրական տվյալների ինտեգրումը կիրականացվի ատրիբուտների և վիզուալիզացիայի մակարդակում՝ Կադաստրի կոմիտեի հետ սերտ համագործակցությամբ: Արմստատի դիրքորոշումը հետևյալն է. վիճակագրական տվյալների քարտեզագրական ներկայացումը իրականացնել նոր կայքում ներդրվելիք GIS գործառույթի միջոցով՝

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Վիճակագրական կոմիտեի կողմից ստեղծվող տարածական տվյալները համապատասխանեցնել նշված ստանդարտներին և ինտեգրել ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքին՝ դրանց առավելագույն հասանելիությունը և գործնական կիրառելիությունն ապահովելու նպատակով: Հայտնում ենք նաև, որ անհրաժեշտ է վերացնել Նախագծում առկա տեխնիկական թերությունները, մասնավորապես 9.15-րդ ենթակետում ներկայացված ոչ ակտիվ հղումները, ինչը կնպաստի փաստաթղթի ամբողջականության ապահովմանը:	ինտերակտիվ քարտեզների և վահանակների տեսքով:
44. Հայաստանի Հանրապետության միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե	
Չի ներկայացվել	
45. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե	**16.07.2025թ.** **01/14.1/11001-2025**
1. Նախագծի 1-ին մասի «1.2.3. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ենթաբաժնի աղյուսակի՝ 1) 9-րդ և 11-րդ տողերով նախատեսված աշխատանքները հրապարակել նաև ՀՀ մարզերի և Երևան քաղաքի բաշխվածությամբ և ըստ ֆինանսավորման աղբյուրների, շենքերի և շինությունների նշանակությունների, շինմոնտաժային աշխատանքների տեսակի,	**1.** **1) Ընդունվել է մասամբ:** Նախագծում խնդրո առարկա առաջարկը վերաբերում է «1.2.3. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ենթաբաժնի 8-րդ և 10-րդ տողերին՝ 123008 և 123010 ծածկագրերին: Սակայն փոփոխություն կատարվել է միայն կետ 10-ում՝ 123010 ծածկագրում, մասնավորապես սույն վիճակագրական աշխատանքի ընդգրկվածության սյունյակում (սյունյակ 4)

	ավելացել են «ըստ Երևան քաղաքի և մարզերի» բառերը: Բացի այդ, Ձև 1-ԿՇ տարեկան վիճակագրական հաշվետվության ձևում ավելացել է շինարարական և շինմոնտաժային աշխատանքների ծավալների բաշխվածությունն ըստ ք. Երևանի և ՀՀ մարզերի աղյուսակը: Ինչ վերաբերում է Ձև 1-ԿՇ վիճակագրական հաշվետվության ձևով (ամսական և տարեկան) ըստ ֆինանսավորման աղբյուրների վիճակագրական տվյալների հավաքմանը, ապա դա նպատակահարմար չէ, քանի որ խնդրո առարկա ցուցանիշի ամբողջականությունն ապահովում է Ձև 2-ԿՇ վիճակագրական հաշվետվության ձևով և հրապարակվում «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցում:
2) 10-րդ տողով նախատեսված աշխատանքը հրապարակել նաև ՀՀ մարզերի և Երևան քաղաքի բաշխվածությամբ և ըստ էներգակիրների տեսակների, ծավալների և արժեքների:	**2) Չի ընդունվել:** Առաջարկը վերաբերում է Նախագծի «1.2.3. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ենթաբաժնի 9-րդ տողին և հարկ է նշել, որ «Էներգակիրների արտադրության, սպառման և պահուստների մասին» 1-էներգետիկա վիճակագրական հաշվետվության ձևի հավաքումն

	իրականացվում է միայն հանրապետության կտրվածքով՝ ըստ հետևյալ ոլորտների. արդյունաբերություն (121010 ծածկագիր՝ նաև ըստ տնտեսական գործունեության տեսակների), շինարարություն (123009 ծածկագիր) և տրանսպորտ (124018 ծածկագիր): Ինչ վերաբերում է խնդրո առարկա տեղեկության հրապարակմանն ըստ էներգակիրների տեսակների, ծավալների և արժեքների, ապա հարկ է նշել, որ այն զետեղվում է «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» վիճակագրական ժողովածուի «Էներգետիկա» ենթահատվածում, տե՛ս https://armstat.am/file/doc/99554033.pdf հղումը:
2. «1.2.3 Շինարարություն» բաժնում նախատեսված է բնակելի շենքերի գործարկման մասին տեղեկատվությունը՝ եռամսյակային պարբերականությամբ: Սակայն բնակֆոնդի շինարարական ծավալների և տեմպերի մասին իրական ժամանակահատվածում պատկերացում կազմելու համար առավել արդյունավետ կլինի ոչ միայն գործարկված շենքերի, այլ նաև շինարարության ընթացքում գտնվող բնակելի շինարարության վերաբերյալ ամսական կտրվածքով տեղեկատվության հրապարակումը:	**2. Չի ընդունվում:** Ըստ շինարարական աշխատանքների մեթոդաբանության, ընթացիկ շինարարությունը վերաբերում է որևէ ժամանակահատվածում փաստացի կատարված ծախսերի ծավալներին:
3. «5.7 բնակարանային ֆոնդ և կոմունալ տնտեսություն» բաժնում բնակարանային ֆոնդի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակել նաև առնվազն կիսամյակային պարբերականությամբ, ինչպես նաև առանձին	**3.Ընդունվել է մասամբ:** Հաշվի առնելով, որ բնակֆոնդի վերաբերյալ տեղեկությունների աղբյուրն իր բնույթով և

բնութագրիչներով աղյուսակներից զատ՝ հրապարակել նաև ամփոփ աղյուսակներ: Օրինակ, բազմաբնակարան շենքերի կառուցման տարեթվերի մասով աղյուսակները ներկայացվում են առանձին՝ ըստ կառավարման մարմինների և համայնքների կողմից կառավարվող շենքերի, սակայն մեկ ամփոփ աղյուսակ ներկայացված չէ: Նույնը վերաբերում է կառուցվող բազմաբնակարան շենքերի թվի, հարկայնության (բնակարանների) և բնակելի տների (թվի, մակերեսի) վերաբերյալ տեղեկատվության և այլ ցուցանիշներին:	բովանդակությամբ վերաբերում է ՀՀ համայնքների կողմից վարվող համապատասխան վարչական ռեգիստրների տվյալներին, ապա դրանց վերաբերող կիսամյակային հաճախականությամբ ամփոփ ցուցանիշների հրապարակումը պետք է պայմանավորվի այդ վարչական ռեգիստրների կողմից հայցվող կիսամյակային հաճախականությամբ Արմստատին համապատասխան տեղեկություններ ներկայացնելու հնարավորությամբ: Նշվածի շուրջ աշխատանքային կարգով քննարկվել է որոշ համայնքապետարանների հետ, որի արդյունքում պարզվել է, որ նշվածին վերաբերող վարչական հաշվառումների արդյունքում Արմստատին հնարավոր է տեղեկություններ տրամադրել միայն տարեկան հաճախականությամբ: Ինչ վերաբերում է բնակֆոնդի ամփոփ աղյուսակների հրապարակմանը, տեղեկացվում է, որ առաջարկն ընդունվել է և 2025թ.-ի «Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը» վիճակագրական ժողովածուի մեջ կիրականացվեն համապատասխան փոփոխություններ:

4. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների աղյուսակի «1.3. շինարարության ծավալը» տողից հետո ավելացնել «1.3.1. շինմոնտաժային ծավալը» տողը՝ համապատասխան ցուցանիշներով:	**4. Չի ընդունվել:** Արմստատի կողմից հրապարակվող «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները» մամուլի հաղորդագրության մեջ նման տարանջատումը նպատակահարմար չէ, քանզի հայցվող տեղեկությունը հրապարակվում է «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցում:

46. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին		**31.07.2025թ.** **01/16136-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-	
47. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին		**31.07.2025թ.** **01/29.5/5/6013-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-	
48. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմին		**25.06.2025թ.** **01/02.1/621-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-	
49. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմին		**25.06.2025թ.** **01//1188-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-	

50. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	**23.06.2025թ.** **/06.1/2/8386-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-
51. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին	**23.07.2025թ.** **ՔՏՄ/06.1.3/19844-25**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-
52. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան	**25.06.2025թ.** **Ա/0485-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-
53. Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդ	
Չի ներկայացվել	
54. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան	
Չի ներկայացվել	
55. Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտ	**29.07.2025թ.** **ԴԴ/3225-25**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-
56. Հայաստանի Հանրապետության դատախազություն	**24.07.2025թ.** **02//16301-2025**
ՀՀ դատախազության կողմից ՀՀ վիճակագրական կոմիտե ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ներկայացվող քննչական աշխատանքի մասին» Ձև 1Մ հաշվետվությունը, որի լրացման և ներկայացման կարգը սահմանվում է	**Ընդունվել է ի գիտություն:** Հաշվի առնելով Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 2)-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև 4-րդ հոդվածի 1-ին մասի 4)-րդ կետով սահմանված դրույթները,

«Մինչդատական վարույթը բնութագրող ցուցանիշների վիճակագրական հաշվետվությունների միասնական ձևերը և դրանց լրացման ու ներկայացման կարգերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի N 1225-Ն որոշմամբ: Այս կապակցությամբ հայտնում եմ, որ ՀՀ Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի N 1225-Ն որոշումը մինչ օրս չի համապատասխանեցվել 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի կարգավորումներին:	ինչպես նաև այն, որ «Մինչդատական վարույթը բնութագրող ցուցանիշների վիճակագրական հաշվետվությունների միասնական ձևերը և դրանց լրացման ու ներկայացման կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի N 1225-Ն որոշմամբ հաստատված հաշվետվության ձևի լրացման, ամփոփման և համաձայն վիճակագրական ծրագրերի Արմստատին ամփոփ հաշվետվության ներկայացման հետ կապված աշխատանքները գտնվում են ՀՀ-ում նախաքննություն և հետաքննություն իրականացնող մարմինների և ՀՀ դատախազության իրավասությունների տիրույթում, և որոնց իրականացումը կրում է խիստ մասնագիտական բնույթ, առաջարկվում է նշված մարմիններին հանդես գալ համապատասխան օրենսդրական նախաձեռնությամբ՝ խնդրո առարկա հաշվետվության ձևը՝ 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի կարգավորումներին համապատասխանեցնելու նպատակով:

57. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտե	13.11.2025թ. Ե/10485-2025
Հաշվի առնելով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ՀՀ վիճակագրական կոմիտեին պարբերաբար տրամադրվող տեղեկատվության մասնագիտական ճշգրիտ դասակարգման ապահովման անհրաժեշտությունը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ վիճակագրական կոմիտեում 07.11.2025թ. կայացած քննարկման արդյունքները՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն առաջարկում է «2026 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծի «5.4. Իրավական վիճակագրություն» բաժնի 43-րդ միջոցառումը (Հարկային և մաքսային հանցագործությունների վերաբերյալ իրականացվող նախաքննության մասին) հանել, քանի որ այն առնչվում է նախաքննության արդյունքներին և արդեն իսկ ներառված է նախագծի նույն ենթաբաժնի 47-րդ միջոցառման մեջ (Հայաստանի Հանրապետության հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ներկայացվող քննչական աշխատանքի մասին ձև 1Մ հաշվետվություն): Միևնույն ժամանակ, առաջարկվում է նաև քննարկել «Գրանցված հանցագործությունների քանակն ըստ հանցատեսակների» վիճակագրական աղյուսակի (Ձև 1–հանցագործություն) «Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ» ենթաբաժնում առանձին տողերով հարկային և մաքսային հանցագործություններն արտացոլելու նպատակահարմարությունը:	**Չի ընդունվել:** Խնդրո առարկա «Հարկային և մաքսային հանցագործությունների վերաբերյալ իրականացվող նախաքննության մասին» Ձև 1-Նախաքննություն հաշվետվական ձևում նախատեսված է համապատասխան վարչական ռեգիստր վարող մարմիններից ստանալ նաև ավարտված վարույթներով պատճառված գույքային վնասի չափի ու դրանց վերականգնման վերաբերյալ տեղեկություններ՝ ըստ հոդվածների, ինչը սակայն ներառված չէ ներկայում գործող ՀՀ կառավարության 23.10.2008թ. թիվ 1225-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ներկայացվող քննչական աշխատանքի մասին կիսամյակային և տարեկան վիճակագրական հաշվետվության միասնական ձևով (ձև 1Մ) և դրա լրացման ու ներկայացման կարգով» նախատեսված ցուցանիշների ցանկում: Ըստ այդմ, նշված առաջարկության իրագործումը նախևառաջ պայմանավորված է նշյալ ձև 1Մ հաշվետվության ձևում

	համապատասխան փոփոխությունների իրականացմամբ, իսկ դրա իրականացման նախաձեռնությունը գտնվում է այդ հաշվետվության միջոցով ստացվող համապատասխան տեղեկությունների վարչական ռեգիստր վարող մարմինների իրավասությունների տիրույթում: Հետևաբար մինչ ձև 1Մ հաշվետվությունում անհրաժեշտ փոփոխությունների իրականացումն Արմստատը նպատակահարմար է գտնում խնդրո առարկա ձև 1-Նախաքննություն հաշվետվությամբ սահմանված տեղեկությունների ստացումը ՀՀ քննչական կոմիտեից և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեից: Ինչ վերաբերում է ձև 1-հանցագործություն հաշվետվության ձևում «տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ» բաժնի ներքո «հարկային և մաքսային հանցագործությունների վերաբերյալ առանձին տողի ավելացմանը», ապա խնդրո առարկայի համատեքստում այն ևս նպատակահարմար չէ իրականացնել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ձև 1-հանցագործություն հաշվետվական ձևում ևս նախատեսված չեն

	ավարտված վարույթներով պատճառված գույքային վնասի չափի ու դրանց վերականգնման վերաբերյալ հարցադրումներ, իսկ այդպիսի հարցադրումների ներառումը նշված հաշվետվական ձևում նպատակահարմար չէ, քանի որ ձև 1-հանցագործություն հաշվետվությունը ներկայացնող մարմինը ՀՀ ներքին գործերի նախարարությունն է, որի իրավասությունների տիրույթում ներառված չեն խնդրո առարկա տեղեկությունների մասով հաշվառումների իրականացումը: Միաժամանակ, համաձայն Արմստատում 07.11.2025թ. կայացած քննարկման ժամանակ ձեռք բերված պայմանավորվածության 1-Նախաքննություն վիճակագրական հաշվետվական ձևում կիրականացվեն համապատասխան փոփոխություններ:

58. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե	**25.06.2025թ.** **01/22/219533-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-

59. Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհուրդ	
Չի ներկայացվել	
60. Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատ	**15.07.2025թ.** **ՀՊԵ/01/364-2025**
Հաշվեքննիչ պալատի կողմից իրականացված պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաների ընդգրկվածության բարձրացման (ԿՀ-0002-25-01) և օդի աղտոտվածության նվազեցման (ԿՀ-0004-25-03) կատարողականի հաշվեքննությունների արդյունքում արձանագրվել է, որ՝ • Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին վիճակագրական հաշվետվությունների ձևերը չեն ենթադրում պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների ընդհանուր թվի, ռիսկի գոտում գտնվող անձանց, ինչպես նաև նրանց բնութագրող ապաագրեգացված այլ տեղեկատվության (օրինակ՝ ըստ սեռատարիքային կազմի, պատճառների, մարզի, համայնքի վերաբերյալ) ներկայացում: Ըստ այդմ, նշված տվյալները տեղ չեն գտնում հրապարակվող վիճակագրական հաշվետվություններում: • ՀՀ պաշտոնական վիճակագրությունը չի պարունակում *համապարփակ* տվյալներ մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակի մասին: ՀՀ պաշտոնական վիճակագրությունը ներառում է տվյալներ այն անշարժ աղբյուրների մասով (կազմակերպությունների / անհատ ձեռնարկատերերի ներկայացրած վարչական վիճակագրական հաշվետվությունների հիման վրա), որոնց նախագծային առավելագույն արտանետումները բավարարում են օդի պահանջվող օգտագործմանը, որը մեծ է 200 մլն խոր. մ/տարի ծախսից, ինչպես նաև շարժական	**Չի ընդունվել:** Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների վերաբերյալ տեղեկությունների վիճակագրական ծրագրերում հասցեագրման վերաբերյալ առաջարկությունը չի ընդունվել, պայմանավորված այն հանգամանքով, որ Արմստատը ԿԳՄՄՆ-ից արդեն իսկ ստանում է հանրակրթական դպրոցներից հեռացած (ուսումն անավարտ թողած աշակերտների թվաքանակի՝ ըստ դասարանների և պատճառների վերաբերյալ տեղեկություններ (տե՛ս https://www.armstat.am/file/article/sv_03_25a_5110.pdf 225-226-րդ էջերում): Ընդ որում, նշվածի վերաբերյալ ԿԳՄՄՆ-ն իր 01.09.2025թ.-ի թիվ 01/21/28352-2025 գրությամբ Արմստատին ներկայացրել է պարզաբանում առ այն, որ ներկայում ԿԳՄՄՆ-ն խնդրո առարկային վերաբերող հնարավոր բոլոր տեղեկություններն արդեն իսկ ներկայացնում է Արմստատին: Ըստ այդմ, վերոհիշյալից բացի, խնդրո առարկային

աղբյուրներից արտանետված վնասակար նյութերի քանակի վերաբերյալ: Մնացյալ մասով պաշտոնական հաշվառում չի իրականացվում: Հաշվեքննության ենթարկված մարմիններին ներկայացվել են արդյունավետ հանրային կառավարման համար անհրաժեշտ տվյալների վերոնշյալ բացերի հասցեագրմանն ուղղված առաջարկություններ, որոնք ընդունվել են նրանց կողմից: Մասնավորապես, առաջարկվել է ներկայացնել պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների, ռիսկի գոտում գտնվող անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալները (ինչպես ագրեգացված, այնպես էլ՝ ապաագրեգացված), ինչպես նաև մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի *համապարփակ* գույքագրման արդյունքները՝ ըստ արտանետման աղբյուրների: Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում ենք դիտարկել նշված առաջարկությունները «2026 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծում հասցեագրելու հնարավորությունը:	վերաբերող այլ լրացուցիչ տեղեկությունների՝ ԿԳՄՄՆ-ից ստացման պարագայում Արմստատը պատրաստակամ է դրանք ևս ավելացնել համապատասխան պաշտոնական վիճակագրական հրապարակումներում: Ինչ վերաբերում է պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկում գտնվող երեխաների վերաբերյալ ցուցանիշների՝ վիճակագրական ծրագրերում հասցեագրման առաջարկությանը, ապա հաշվի առնելով ԿԳՄՄՆ-ի կողմից վերոնշյալ գրությամբ Արմստատին ներկայացված պարզաբանումն առ այն, որ ԿԳՄՄՆ-ն նշվածի մասով վարում է համապատասխան վարչական հաշվառում, Արմստատը, նախևառաջ կնախաձեռնի, ԿԳՄՄՆ-ի հետ համատեղ քննարկում՝ այդ տեղեկությունների բովանդակությանը, կառուցվածքին, դեզագրեգացման հնարավոր աստիճանին, ներկայացման հնարավոր հաճախականությանն ու ժամկետներին վերաբերող հարցերը պարզաբանելու նպատակով, որից հետո նախապես համաձայնեցված ձևաչափով հնարավոր տեղեկություններ ստանալու պարագայում միայն դրանք կհասցեագրի նաև վիճակագրական ծրագրերում՝ խնդրո առարկա

	ցուցանիշների պարբերաբար մշակման, արտադրման ու տարածման շարունակականությունն ապահովելու նպատակով: Հարկ է նշել նաև, որ Արմստատը մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի վերաբերյալ ամփոփ տեղեկությունը ստանում է ՇՄՆ-ից՝ ՀՀ-ում գործող կազմակերպությունների կողմից ներկայացված «Անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մասին» Ձև N 2-տա (օդ) տարեկան վարչական վիճակագրական ամփոփ հաշվետվությունների և շարժական աղբյուրներից՝ ավտոտրանսպորտից արտանետումների վերաբերյալ տեղեկանքի տեսքով: ՇՄՆ-ի կողմից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի վերաբերյալ համապարփակ տվյալներ տրամադրելու պարագայում Արմստատն այն կներառի վիճակագրական ծրագրում:
61. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ	
Չի ներկայացվել	

62. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով		**11.07.2025թ.** **ՄՄ/34.4-Մ2-4/3357-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-	
63. Հայաստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության հանձնաժողով		**23.06.2025թ.** **ԳԳ/758-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-	
64. Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով		**26.06.2025թ.** **01/2589-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-	
65. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ		
Չի ներկայացվել		
66. Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության		
Չի ներկայացվել		
67. Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա		
Չի ներկայացվել		
68. Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատ		
Չի ներկայացվել		

69. «Հայաստանի հաշվապահների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն	16.07.2025թ. Վ-01
Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված «2026 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծի՝ ամսական հաճախականությամբ ներկայացվող մի շարք վիճակագրական հաշվետվությունների ներկայացման համար նախատեսված է հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասնօրյա ժամկետ: Ռեսպոնդենտի գործունեության առանձնահատկություններով պայմանավորված բազմաթիվ են դեպքերը, երբ ծառայությունների մատուցման հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տասներորդ օրվանից հետո՝ մինչև քսաներորդ օրը: Նման դեպքերը բազմաթիվ են նաև այն պատճառով, որ ՀՀ հարկային օրենսգրքով հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տասներորդ օրվանից մինչև քսաներորդ օրը դուրս գրված և վավերացված հաշվարկային փաստաթղթերի մասով հարկային հաշվառման կանոնները նույնն են, ինչ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տասներորդ օրը դուրս գրված փաստաթղթերի դեպքում: Դրանով պայմանավորված անհամապատասխանություն է առաջանում մինչև տասներորդ օրը Վիճակագրական կոմիտե ներկայացված տվյալների և հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա փաստացի ցուցանիշների միջև, ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջանում ճշգրտել ռեսպոնդենտների կողմից ներկայացված վիճակագրական տվյալները: Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք ամսական հաճախականությամբ ներկայացվող վիճակագրական հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետ սահմանել հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող քսաներորդ օրը:	**Չի ընդունվել:** Ռեսպոնդենտների կողմից վիճակագրական հաշվետվությունների ներկայացման ժամկետների երկարաձգման վերաբերյալ հարցն Արմստատի համար ունի առնվազն մեկ տասնամյակի նախապատմություն, որի առնչությամբ Արմստատի դիրքորոշումը հետևյալն է. Արմստատի կողմից հավաքվող/ստացվող վիճակագրական տեղեկությունների ու դրանց հիմքով մշակվող, արտադրվող և տարածվող պաշտոնական վիճակագրական արտադրանքների հրապարակման ժամկետների փոփոխությունն ունի սահմանափակումներ: Նշվածը նախևառաջ պայմանավորված է Արմստատի տարբեր միջազգային կազմակերպություններին անդամակցության և համագործակցության (ստանձնած պարտավորությունների) հետ, մասնավորապես՝ Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) տվյալների տարածման հատուկ ստանդարտին (ՏՏՀՍ), ՀԲ-ին, Աշխատանքի միջազգային կազմակերպությանը, Միավորված ազգերի

	կազմակերպության վիճակագրական կառույցներին (UNICEF, UNIDO, UNDP և այլն), Ասիական զարգացման բանկին, Անկախ պետությունների համագործակցության վիճակագրական կոմիտեին, Եվրասիական տնտեսական միության վիճակագրական դեպարտամենտին, Եվրոստատին և այլնին (տե՛ս ամբողջական ցանկը): Բացի այդ, պաշտոնական վիճակագրության մշակումը, արտադրությունն ու տարածումն իրականացվում է համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով սահմանվող վիճակագրական ծրագրերին համապատասխան, որոնք մշակվում են պաշտոնական վիճակագրության օգտագործողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա: Պաշտոնական վիճակագրության օգտագործողներից են ՀՀ կառավարությունը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ԿԲ-ն, կրթական, գիտական և հետազոտական կազմակերպությունները, բիզնես միջավայրը և այլն: Ընդ որում, Արմստատի պաշտոնական վիճակագրության հրապարակման գործընթացը կանոնակարգվում է համաձայն տվյալների տարածման ժամանակացույցի:

	Նշված ժամանակացույցի ներքո ներկայացված են այնպիսի կարևորագույն ցուցանիշներ, ինչպիսիք են օրինակ՝ տնտեսական ակտիվության ցուցանիշը, տնտեսության իրական հատվածի՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի և ծառայությունների, տրանսպորտի, շինարարության, ինչպես նաև միջին ամսական անվանական աշխատավարձի, գների և դրանց ինդեքսների և այլնի վերաբերյալ ցուցանիշները, որոնք Արմստատի կողմից հրապարակվում են ամսական պարբերականությամբ՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-րդ օրացուցային օրը: Պաշտոնական վիճակագրական գործընթացների իրականացումը, բացի սկզբնական տվյալների հավաքումից, նախատեսում է նաև դրանց ստուգաճշտում, ամփոփում, ցուցանիշների հաշվարկ, ելքային աղյուսակների պատրաստում և այլն, որոնք իրենց բնույթով աշխատատար և ժամանակատար են: Հետևաբար, Արմստատի կողմից վիճակագրական տեղեկությունների հավաքման/ստացման ժամկետների ցանկացած փոփոխություն կարող է հանգեցնել

	վերը հիշատակված պարտավորությունների չկատարման ռիսկերի: Անկախ վերոգրյալից, Արմստատը միշտ էլ ըմբռնումով է մոտեցել խնդրո առարկա հարցադրմանը, մասնավորապես՝ դեռևս 2019թ. վիճակագրական ծրագրում ռեսպոնդենտների կողմից վիճակագրական հաշվետվությունների ներկայացման ժամկետները հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 5-ի փոխարեն երկարաձգելով մինչև 10-րդ օրը, բացի այդ «Վիճակագրական տվյալների ներկայացման կարգով» նախատեսվում է հաշվետվությունների ներկայացման համար ևս 5 լրացուցիչ օր՝ հնարավոր բացթողումները (լրացուցիչ ճշգրտումներ, բացակայող տեղեկություններ և այլն) շտկելու համար: Նշվածն ուղղակիորեն մեղմում է Ձեր մտահոգությունը՝ կապված հաշվետվությունների ներկայացման ժամկետների հետ:
70. «Սպառողների խորհրդատվության կենտրոն» հասարակական կազմակերպություն	
Չի ներկայացվել	
71. Մարդկային զարգացման միջազգային կենտրոն	
Չի ներկայացվել	

72. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն	
Չի ներկայացվել	
73. «Հայաստան» համահայկական հիմնադրամ	
Չի ներկայացվել	
74. Հայաստանի Հանրապետությանում արժույթի միջազգային հիմնադրամի ներկայացուցչություն	
Չի ներկայացվել	
75. Հայաստանի Հանրապետությանում միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամ	
Չի ներկայացվել	
76. Հայաստանի Հանրապետությանում միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի ներկայացուցչություն	
Չի ներկայացվել	
77. Հայաստանի Հանրապետությանում միավորված ազգերի կազմակերպության արդյունաբերական զարգացման կազմակերպության ներկայացուցչություն	
Չի ներկայացվել	
78. Հայաստանի Հանրապետությանում միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպության գրասենյակի ներկայացուցչություն	
Չի ներկայացվել	
79. Հայաստանի Հանրապետությանում միգրացիայի միջազգային կազմակերպության ներկայացուցչություն	
Չի ներկայացվել	

80. Հայաստանի Հանրապետությանում աշխատանքի միջազգային կազմակերպություն	
Չի ներկայացվել	
81. Հայաստանի Հանրապետությանում վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ներկայացուցչություն	
Չի ներկայացվել	
82. Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակ	
Չի ներկայացվել	
83. Հայաստանում եվրոպական միության պատվիրակություն	
Չի ներկայացվել	
84. Ասիական զարգացման բանկի հայաստանյան մշտական առաքելություն	
Չի ներկայացվել	
85. Հայաստանի Հանրապետությանում միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ	
Չի ներկայացվել	
86. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ	**01.08.2025թ.** **08.2-07/659-25**
1.«Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը / 9. Առողջապահական համակարգ, հիվանդացություն և բուժսպասարկում /9.3 Հիվանդանոցների գործունեություն» բաժնի «Հիվանդանոցներում կատարված վիրահատություններն ըստ տեսակների» աղյուսակում ներառելու նպատակով հավաքագրել տեղեկատվություն օտարերկրյա քաղաքացիների/ռեզիդենտների վերաբերյալ, ինչպես նաև առանձնացնել «Պլաստիկ/էսթեթիկ» վիրաբուժության	**1.Ընդունվել է մասամբ:** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիվանդացություններին վերաբերող տեղեկությունների աղբյուրը ԱՆ-ի ներքո վարվող համապատասխան վարչական ռեգիստրի տեղեկություններն են, որոնք իրենց

տեսակները: Սույն տեղեկատվությունն անհրաժեշտ է բժշկական տուրիզմի գնահատման մեխանիզմների կատարելագործման համար:	մեջ չեն բովանդակում բուժառուների՝ ըստ քաղաքացիության և /կամ ռեզիդենտության երկրի մասին տեղեկություններ (նշվածը աշխատանքային կարգով ճշտվել է ԱՆ-ի համապատասխան ներկայացուցչի հետ), ըստ այդմ տեղեկացվում է, որ հայցվող բաշխվածությամբ ցուցանիշների հրապարակումն Արմստատը չի կարող իրականացնել: Ինչ վերաբերում է պլաստիկ /էսթետիկ վիրաբուժության վերաբերյալ տեղեկություններին, ապա տեղեկացվում է, որ հաշվի առնելով վերը հիշատակված տեղեկատվական աղբյուրում՝ վարչական ռեգիստրում ներկայում առկա տեղեկությունները, Արմստատը պաշտոնական վիճակագրական հրապարակումների «Առողջապահական համակարգ, հիվանդացություն և բուժսպասարկում» հատվածում հնարավորության սահմաններում կիրականացնի խնդրո առարկային առնչվող լրացուցիչ նոր ցուցանիշների հրապարակում:
2.Առաջարկում ենք ավելացնել կամ մեծացնել կլիմայական փոփոխությունների, ջերմոցային գազերի արտանետումների և ընդհանուր շրջակա միջավայրի վիճակագրական տվյալների հրապարակման հաճախականությունը:	**2.Չի ընդունվել:** Կլիմայական փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունը կրում է վարչական բնույթ և Արմստատի գործառույթներից դուրս է:

	Ջերմոցային գազերի արտանետումների վերաբերյալ տեղեկությունը ներկայացնում է ՇՄՆ-ն «Ձև 1-ՋԳ - ջերմոցային գազերի արտանետումների մասին» վիճակագրական հաշվետվությամբ երկամյա հաճախականությամբ: Արմստատը ջերմոցային գազերի արտանետումների ծավալների մասին տեղեկությունը հրապարակում է և Արմստատբանկում (https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb), և «Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում» ամենամյա վիճակագրական ժողովածուում (https://www.armstat.am/file/article/eco_book_2023_7.pdf , էջ 87): Շրջակա միջավայրի վերաբերյալ վիճակագրական տվյալները հիմնականում ստացվում են վարչական ռեգիստրներից տարեկան հաճախականությամբ, իսկ փոքր մասը՝ ամսական և կիսամյակային, որը հրապարակվում է «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցներում:

3.Ծրագրի 285-րդ էջում նշված է հետևյալը՝ «600023 Ջերմոցային գազերի արտանետումների մասին, Ձև 1-ՋԳ, Աշխատանքի ավարտ», ինչը կարող է ենթադրել տվյալների հետագա հրապարակման դադար: Խնդրում ենք ապահովել տվյալների շարունակական հավաքագրումն ու հրապարակումը, ինչպես նաև ժամանակային շարքերի պահպանման նպատակով տվյալները մատչելի դարձնել Excel ֆորմատով կամ տվյալների բաց հարթակներում:	**3.Ընդունվել է ի գիություն:** Քանի որ «Ջերմոցային գազերի արտանետումների մասին» Ձև 1-ՋԳ հաշվետվությունը երկամյա պարբերությամբ է, հետևաբար նշվել է «Աշխատանքի ավարտ»: Այս վիճակագրական աշխատանքը ներառվելու է «2027 թվականի վիճակագրական ծրագրում»:
4.Առաջարկում ենք ներառել բնակելի անշարժ գույքի գների ինդեքսի հրապարակումը, որը կհաշվարկվի և կհրապարակվի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սկսած 2025 թվականի 4-րդ եռամսյակից:	**4.Ընդունվել է:** Հաշվի առնելով ԿԲ-ի կողմից իրականացվող բնակելի անշարժ գույքի գների ինդեքսի (ԲԱԳԳԻ) հաշվարկման գործընթացները և 2025թ. 4-րդ եռամսյակում ԿԲ-ի կողմից նախատեսվող դրա հրապարակումը, Արմստատն ընդունելի է համարում ներկայացված առաջարկը՝ համապատասխան հրապարակումն ապահովել նաև Արմստատի պաշտոնական կայքում: Միաժամանակ, Արմստատը խնդրում է՝ հրապարակման համար տրամադրել նաև հաշվարկների համապատասխան մեթատվյալները: Արմստատն ակնկալում է ստանալ նաև ԲԱԳԳԻ-ի հրապարակման պարբերականության և հստակ ժամանակացույցի (ամիս/օր) վերաբերյալ տեղեկություն, որը 2026 թվականից կներառվի

	Արմստատի տվյալների տարածման օրացույցներում:
87. Հայաստանի բանկերի միություն	
Չի ներկայացվել	
88. Հայաստանի ֆոնդային բորսա	
Չի ներկայացվել	
89. «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ	
Չի ներկայացվել	
90. «Վիվա Արմենիա» ՓԲԸ (Վիվա-ՄՏՍ)	
Չի ներկայացվել	
91. «Յուքոմ» ՓԲԸ	
Չի ներկայացվել	
92. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության «Հայփոստ» ՓԲԸ	
Չի ներկայացվել	
93. «Ռուսալ Արմենալ» ՓԲԸ	
Չի ներկայացվել	

94. «Արմենիա Մարրիոթ» հյուրանոցային համալիր		
Չի ներկայացվել		
95. «Աշտարակ-Կաթ» արտադրական ձեռնարկություն («Պարգև» ՍՊԸ)		
Չի ներկայացվել		
96. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ		**02.07.2025թ.** **01/14.5/4886-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-	
97. «Եվրոստան-Ույուտ» ՍՊԸ		
Չի ներկայացվել		
98. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա		
Չի ներկայացվել		
99. Հայաստանի ազգային գրադարան		
Չի ներկայացվել		
100. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ		**21.07.2025թ.** **24-01/169**
«2026 թվականի վիճակագրական ծրագրի» նախագիծը կառուցվածքային առումով համապարփակ փաստաթուղթ է, որը ամփոփում է ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից նախատեսվող վիճակագրական աշխատանքների ամբողջական տեսլականը: Ծրագիրը ընդգրկուն է և ներառում է տնտեսության իրական հատվածի, արտաքին առևտրի, ֆինանսների, սոցիալական,	**Ընդունվել է ի գիտություն:**	

ժողովրդագրական, բնապահպանական և այլ ոլորտների վիճակագրական տեղեկատվության հավաքման, մշակման և տարածման գործընթացները: Հիմնադրումը միջազգային ստանդարտների վրա, ինչպես նաև Եվրոպական վիճակագրական համակարգի չափորոշիչների կիրառումը, խոսում են այն մասին, որ ծրագիրը նպատակ ունի ապահովել միջազգային համադրելիություն, թափանցիկություն և տվյալների որակ: Ծրագիրն ունի ամբողջական կառուցվածք, սահմանված են վիճակագրական ցուցանիշների ծածկագրերը, հիմնված է միջազգային ստանդարտների և Արժույթի միջազգային հիմնադրամի ցուցանիշների վրա: Այն ապահովում է ոլորտների ընդգրկուն լուսաբանում, տվյալների մշակման հստակ մեթոդաբանություն, հրապարակման ժամկետների սահմանում և միջազգային համադրելիություն: Ընդգծվում է համագործակցությունը տարբեր ինստիտուցիոնալ կառույցների հետ, ինչը ողջունելի է: 1.Ծրագիրը չափազանց ընդգրկուն է և կառուցվածքի բարդությունը կարող է դժվարություններ ստեղծել ոչ մասնագետ օգտվողների համար: 2.Տվյալները հավաքելու և տարածելու մեխանիզմը նկարագրված է մանրամասն, բայց, ի տարբերություն համաշխարհային վիճակագրական այլ բազաների, վերլուծական և արդյունքների մեկնաբանման բաղադրիչը քիչ է: 3.Տարեկան տվյալների հրապարակման վերջնաժամկետները որոշ դեպքերում սահմանված են բավական ուշ, օրինակ՝ նախորդ տարվա համախառն ներքին արդյունքը ներկայացվելու է մայիսին: 4.Գիտական հետազոտություններ և վերլուծություններ կատարելիս դժվարություններ են առաջանում տարեկան, կիսամյակային, եռամսյակային, ամսական ամփոփվող տվյալների տարբեր ժամկետներում ներկայացման հետ կապված: Նախագծի արդյունաբերությունը կբարձրանա, եթե այն ընդգրկի նաև	

վիճակագրական տվյալների ներկայացման ամփոփ ձևաչափ, որը լայնորեն կիրառվում է համաշխարհային վիճակագրական այլ բազաների կողմից: Ամփոփ ձևաչափում վիճակագրական տվյալների մատչելի լեզվով ներկայացումը մեծ օգնություն է ոչ մասնագետների կամ արագ տեղեկատվություն փնտրողների համար (executive summary): Նպատակահարմար է նախագծում օրգանական գյուղատնտեսության, կանաչ տնտեսության և շրջանաձև տնտեսության վիճակագրական տվյալների բաժնի ձևավորում՝ ՀՀ-ում միջազգային մեթոդաբանությանը և վարչական հաշվառումներին համապատասխան: Միևնույն հաճախականությամբ ներկայացվող (տարեկան, կիսամյակային, եռամսյակային, ամսական) տվյալների համար ցանկալի է սահմանել հրապարակման միասնական ժամանակացույց: Վիճակագրական այլ բազաներում լայնորեն կիրառվում են նաև տվյալների վիզուալ ներկայացման տարբեր գործիքներ, ինտեգրացիա՝ ազգային և միջազգային բաց տվյալների հարթակների հետ, հասարակական հարցումների ամփոփ ներկայացում: Այս մոտեցումները կհարստացնեն Վիճակագրական կոմիտեի բազան և կավելացնեն օգտվողների բանակը: Ծրագիրը ամուր հիմք է Հայաստանում պաշտոնական վիճակագրության շարունակական բարելավման քաղաքականությունների ապացուցողական հենքի ձևավորման և հանրային թափանցիկության ապահովման համար:	
101. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Սուրեն Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	
Չի ներկայացվել	
102. Հայաստանի Հանրապետության աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ	
Չի ներկայացվել	

103. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա		
Չի ներկայացվել		
104.Հայաստանի ամերիկյան համալսարան		
Չի ներկայացվել		
105. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան		**31.07.2025թ.** **Ե/458-2025**
1. Հայաստանի Հանրապետության 2024-2028 թվականների վիճակագրական ծրագրի բաժին 4-ի գլուխ 2-ի համաձայն՝ տնային տնտեսությունների հետազոտությունների շրջանակներում նախատեսվում է աղքատության նյութական և ոչ նյութական (կրթություն, առողջապահություն, անվտանգ խմելու ջրի մատչելիություն և բնակարանային պայմաններ) ցուցանիշների վարման շարունակականության ապահովում ու կատարելագործում: Վերջինս ներառում է նյութական և ոչ նյութական բարիքների հասանելիությունը բնակչության տարբեր սոցիալական խմբերին, այս առումով կարևորագույն ցուցանիշներ են համարվում կրթական և առողջապահական ծախսերը ըստ քվինտիլային խմբերի, ինչպես նաև դրանց մասնաբաժինը սպառողական ծախսերի կառուցվածքում ըստ քվինտիլների: Վերջիններս ներկայացված են եղել մինչև 2018 թ.-ի վիճակագրական ժողովածուներում, սակայն վերջին տարիներին դրանք այլևս չեն հրապարակվել, ուստի առաջարկում ենք «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2026 (վիճակագրական-վերլուծական զեկույց)» վիճակագրական ժողովածուի մեջ ներառել նաև կրթական և առողջապահական ծառայությունների վրա կատարվող միջին ամսական ծախսը (մեկ չափահաս անձի հաշվով) ըստ քվինտիլային խմբերի, ինչպես նաև դրանց մասնաբաժինը սպառողական ծախսերի կառուցվածքում ըստ քվինտիլների:	**1.Ընդունվել է:** «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2026» վիճակագրական-վերլուծական զեկույցում կներառվեն ցուցանիշներ՝ կրթական և առողջապահական ծառայությունների վրա կատարվող միջին ամսական ծախսերի (ըստ քվինտիլային խմբերի), ինչպես նաև սպառողական ծախսերի կառուցվածքում դրանց մասնաբաժնի վերաբերյալ:	

2. Հայաստանի Հանրապետության 2024-2028 թվականների վիճակագրական ծրագրով սահմանված՝ աղքատության և սոցիալական վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների ամբողջականացման նպատակից ելնելով, առաջարկում ենք տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի կառուցվածքն (սննդամթերք, ալկոհոլային խմիչք, ծխախոտ, ոչ պարենային ապրանքներ, ծառայություններ) ըստ դեցիալային խմբերի (տոկոսներով) ավելացնել ArmStatBank.am տվյալների բանկում՝ Տնային տնտեսությունների բաժնի այլ ցուցանիշների շարքում: Այս ցուցանիշի ներառումը տվյալների բանկում հնարավորություն կտա ապահովել տվյալների անընդհատությունը և լրացնել առանձին տարիներին բացակա տվյալների բացը, այսպես՝ տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի կառուցվածքն ըստ դեցիալային խմբերի (միայն 1-ին և 10-րդ դեցիլային խմբերն են ներկայացված) 2019 թվականի համար բացակայում են 2020 թ.-ի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական ժողովածուից:	**2.Ընդունվել է:** «Արմստատբանկ» տեղեկատվական համակարգում կզետեղվեն ըստ դեցիլային խմբերի տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի կառուցվածքը բնութագրող ցուցանիշներ:
3. «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2026 (վիճակագրական-վերլուծական զեկույց)» վիճակագրական ժողովածուն ներկայացնել նաև Excel ձևաչափով՝ հաշվի առնելով, որ ժողովածուն ընդգրկում է մեծածավալ քանակական տվյալներ, որոնց մի մասը ներկայացված չէ ArmStatBank.am էլեկտրոնային շտեմարանում և Excel ձևաչափով ցուցանիշների հասանելիությունը կնպաստի այդ բազաների հետ աշխատանքների արդյունավետությունը:	**3.Ընդունվել է:** «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2026» վիճակագրական-վերլուծական զեկույցը կհրապարակվի նաև Excel ձևաչափով:
4. Տարածքային անհամաչափության բազմակողմանի գնահատման և աղքատության հաղթահարման հասցեական քաղաքականության իրականացման տեսանկյունից առանձնակի կարևորություն ունի 580021	**4.Ընդունվել է:** 580021 ծածկագրով նախատեսված բազմաչափ աղքատության համաթվի

ծածկագրով ներկայացված Աղքատության բազմաչափ համաթվի գնահատականը ներկայացնել նաև մարզային կտրվածքով:	գնահատականը «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2026» վիճակագրական-վերլուծական զեկույցում կներկայացվի նաև մարզային կտրվածքով:
5. 580021 ծածկագրի «Աղքատության բազմաչափ համաթվի» փոխարեն գրել «Բազմաչափ աղքատության համաթիվ», որը անգլերեն «Multidimensional Poverty Index» տերմինին համարժեք թարգմանությունն է: Այս դեպքում բազմաչափությունը բնութագրում է աղքատությանը, այլ ոչ թե համաթվին, քանի որ միջազգային կառույցների կողմից և հետազոտական շրջանակներում աղքատությունը դիտարկվում է որպես բազմաչափ երևույթ՝ ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական հարթություններում:	**5.Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
6. Հնգամյա ծրագրով նախատեսված աշխատանքի վիճակագրությունների դինամիկ զարգացում ապահովելու և ոլորտային փոխակերպումներն ու կառուցվածքային տեղաշարժերն արտացոլող վիճակագրական արտադրանքի ապահովման տեսանկյունից առանձնակի կարևորություն ունի ըստ տնտեսական գործունեության ոլորտների խոշոր խմբերի միջին անվանական աշխատավարձի եռամսյակային տվյալները: Վերջիններս, ինչպես նաև միջին անվանական աշխատավարձի, միջին անվանական աշխատավարձի տոկոսային փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ ցուցանիշի վերաբերյալ եռամսյակային տվյալները ArmStatBank էլեկտրոնային շտեմարանում ավելացնելու անհրաժեշտություն կա՝ հատկապես հաշվի առնելով, որ Աշխատանքի շուկան Հայաստանում 2018-2021 թթ.-ի հրապարակումներում բացակայում են ըստ եռամսյակների միջին անվանական աշխատավարձի տոկոսային փոփոխու-	**6.Ընդունվել է ի գիտություն:** Արմստատի կողմից կանոնավոր հրապարակվող «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի (այսուհետ՝ զեկույց)» եռամսյակային թողարկումներում տարիներ շարունակ հրապարակվում են խնդրո առարկա ցուցանիշները՝ տնտեսական գործունեության ոլորտների խոշոր խմբավորմամբ (տես Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2025 թվականի հունվար-հունիսին թողարկման մեջ՝ 1.4.2. Աշխատանքի

թյունը նախորդ տարվա նկատմամբ, ինչը սահմանափակում է ոլորտային և դինամիկ վերլուծությունների հնարավորությունները:	վարձատրություն և աշխատողների թվաքանակ բաժնի ներքո, 109-րդ էջ): Նույն կերպ՝ զեկույցի միևնույն հատվածում հրապարակվում են նաև աշխատողների եռամսյակային թվաքանակի վերաբերյալ ցուցանիշները: Բացի այդ, աշխատողների թվաքանակի և միջին ամսական անվանական աշխատավարձի 2018-2025թթ. ամսական ժամանակային շարքեր հրապարակվում են Արմստատի կայքում (տե՛ս «ԱՇԽԱՏԱՎԱՐՁ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎ» հղումը), ինչն անուղղակիորեն հնարավոր է դարձնում ըստ անհրաժեշտության իրականացնելու տնտեսական գործունեության խոշորացված ոլորտների խմբավորմամբ եռամսյակային միջին ամսական աշխատավարձի գնահատումը (ոչ նշանակալի շեղմամբ): Մյուս կողմից՝ հարկ է նկատի ունենալ նաև, որ Արմստատի մարդկային ռեսուրսների ծանրաբեռնվածությամբ պայմանավորված՝ հաճախ հնարավոր չի լինում միևնույն ցուցանիշը տարատեսակ խմբավորումներով զետեղել միաժամանակ մի քանի հրապարակումներում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, անձնակազմի աշխատանքային

	ծանրաբեռնվածությունը, Արմստատը կդիտարկի խնդրո առարկա ցուցանիշի ներառումը ոչ թե ArmStatBank-ում, այլ Ms Excel ձևաչափով կառուցված ժամանակային շարքերում, ինչն ավելի հարմարավետ է ամսական կամ եռամսյակային բազմաշերտ ցուցանիշների վերլուծություն իրականացնելիս:
7. Աշխատաշուկայի վերաբերյալ վիճակագրական ցուցանիշների ամբողջականության և համադրելիության ապահովման տեսանկյունից նպատակահարմար է 141014 ծածկագրով ներկայացված՝ Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ և աշխատողների թվաքանակ 1 և ավելի վարձու աշխատող ունեցող կազմակերպությունների, 50 և ավելի վարձու աշխատող ունեցող կազմակերպությունների վերաբերյալ տվյալներն առաջարկում ենք ավելացնել նաև ArmStatBank էլեկտրոնային շտեմարանում: Վերջինս առավել մեծ նշանակությունը հատկապես հաշվի առնելով, որ «Աշխատանքի շուկան Հայաստանում» վիճակագրական ժողովածուն միայն վերջին տարում է հասանելի եղել MS Excel ձևաչափով, իսկ մինչ 2023թ.-ը հրապարակվել են MS Word և Adobe Acrobat (.pdf.) ձևաչափերով:	**7. Ընդունվել է ի գիտություն:** Ինչպես արդեն իսկ նշվել էր գրության 6-րդ կետի վերաբերյալ պարզաբանումներում, **1 և ավելի** վարձու աշխատող ունեցող կազմակերպություններում աշխատողների թվաքանակի և միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշները՝ բաշխված տնտեսական գործունեության տեսակներով, մարզերով, սեռով, պետական-ոչ պետական հատվածներով, Ms Excel ձևաչափով բաց հասանելի են Արմստատի կայքում (տե՛ս «ԱՇԽԱՏԱՎԱՐՁ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎ» (https://armstat.am/am/?nid=964 հղումը): Բացի այդ, ինչպես 1 և ավելի, այնպես էլ **50 և ավելի** վարձու աշխատող ունեցող կազմակերպություններին վերաբերող խնդրո

	առարկա ցուցանիշները Ms Excel ձևաչափով, ամսական հաճախականությամբ, հրապարակվում են նաև Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը տեղեկատվական ամսական զեկույցում (վերջինը տե՛ս https://www.armstat.am/am/?nid=82&id=2747 «sv_06_25a_142.xlxs» անվանմամբ նիշքի «Sheet3» և «Sheet9» թերթերում): Այնուամենայնիվ, հաշվի առնելով Արմստատի անձնակազմի աշխատանքային ծանրաբեռնվածությունը, Արմստատը կդիտարկի և ըստ հնարավորության կիրականացնի նաև խնդրո առարկա 50 և ավելի վարձու աշխատող ունեցող կազմակերպությունների աշխատողների թվաքանակի և միջին ամսական անվանական աշխատավարձի վերաբերյալ ժամանակային շարքերի վերոնշյալ էլեկտրոնային շտեմարանում զետեղումը՝ մինչ այդ շարունակելով դրանց հրապարակումները զեկույցի ամսական թողարկումներում, այդ թվում նաև Ms Excel ձևաչափով:

106. Երևանի պետական համալսարան		
Չի ներկայացվել		
107. Հայաստանի եվրոպական համալսարան		
Չի ներկայացվել		
108. Հայաստանի ազգային ագրարային համալսարան		**29.07.2025թ.** **Ե/ՀԶ/1030-25**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-	
109. Հայ-ռուսական համալսարան		
Չի ներկայացվել		
110. «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամ		
Չի ներկայացվել		
111. Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան		**08.07.2025թ.** **01-06-830**
1.ՀՀ վիճակագրական կոմիտեի «Առողջապահություն» բաժնում արձանագրված վարակիչ հիվանդությունների, սննդային, քիմիական թունավորումների և ճառագայթային ախտահարումների վերաբերյալ տվյալները ներկայացնել ըստ ՀՀ մարզերի և հնարավորության դեպքում ընդլայնել բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի և վարակիչ հիվանդությունների ցանկում ներառել արևմտյան Նեղոսի տենդ, COVID-19, դիզենտերիա վարակները:	**1.Չի ընդունվել:** Առաջարկներն իրենց բովանդակությամբ առնչվում են վարչական բնույթի տեղեկություններին, որոնց վերաբերյալ վարչական հաշվառումները, այդ թվում՝ հայցվող բովանդակությամբ և մանրամասնությամբ ցուցանիշների հնարավոր ամփոփումները գտնվում են համապատասխան ոլորտում	

	քաղաքականություն մշակող և իրականացնող պետական մարմնի՝ ԱՆ իրավասությունների տիրույթում: Ըստ այդմ, այդպիսի մանրամասնությամբ ցուցանիշների հնարավոր ստացման նպատակով նախևառաջ առաջարկվում է դիմել ԱՆ-ին: Նշվածը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ համաձայն Օրենք-ի 14-րդ՝ «Վիճակագրական ծրագրերի կազմումը» հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ վիճակագրական ծրագրերի կազմումը հաշվի է առնում նաև **առկա ռեսուրսների սահմանափակումները**, **վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը**: Իսկ Օրենքի նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ վիճակագրական ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները հաշվի են առնում **երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին**, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու նպատակով ապահովում են դրանց **հնարավոր կայուն պարբերականությունը** և տարեկան

	կտրվածքով պաշտոնական **վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը**: Ըստ այդմ, ԱՆ-ի կողմից խնդրո առարկա ցուցանիշների Արմստատին ներկայացման հնարավորության պարագայում, Արմստատը կքննարկի դրանց վիճակագրական ծրագրերում ներառման վերաբերյալ հարցը: Հարկ է նշել նաև, որ Ձեր կողմից հայցվող խնդրո առարկա տեղեկությունների մի մասն արդեն իսկ հրապարակվում է Առողջապահության ազգային ինստիտուտի կողմից պատրաստվող «Առողջություն և առողջապահություն» վիճակագրական տարեգրքում, օրինակ՝ «Չարորակ նորագոյացություններ»-ի վերաբերյալ ցուցանիշները տե՛ս նշված հրապարակման 98-147 էջերում: Ծխախոտի օգտագործմանը, ալկոհոլի չարաշահմանը, անլիարժեք սննդակարգին, ֆիզիկական թերակտիվությանը և վարքագծային ռիսկի այլ գործոնների տարածվածությանը վերաբերող հայցվող տեղեկությունների առնչությամբ տեղեկացվում է, որ որպես այդպիսի ցուցանիշների ստացման աղբյուր կարող են հանդիսանալ բնակչության շրջանում առանձին նպատակային սոցիոլագիական հետազոտությունները՝

	զուգորդված նաև համապատասխան բժշկական գործիքային չափումներով, ինչպես նաև ըստ նշված պատճառների բնակչության առողջությանը հասցված վնասի բժշկական վերլուծությունը՝ միջազգայնորեն ընդունված չափանիշներին և մեթոդաբանությանը համապատասխան:Նշվածների իրականացման գործիքակազմերը սակայն դուրս են Օրենքով սահմանված Արմստատի գործառույթների շրջանակից, ինչով էլ պայմանավորված Արմստատի կողմից չեն կարող իրականացվել:
2.Առաջարկում ենք վնասվածքների և թունավորումների վերաբերյալ տեղեկատվությունը տարանջատել և ներկայացնել առանձին ըստ տարիքային խմբերի և բնակության վայրի:	**2. Չի ընդունվել:** Տե՛ս 1-ին կետի մեկնաբանությունը:
3. «Առողջապահություն» բաժնում նպատակային քանակական կազմի և նրանցից պատվաստումներում ընդգրկված երեխաների, հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի, կանխարգելիչ պատվաստումների, այլ պատվաստումների և պատահական ծակոցների բժշկական հակացուցումների և պատվաստումներից հրաժարվողների վերաբերյալ տվյալները ներկայացնել՝ ըստ ՀՀ պատվաստումների օրացույցի բոլոր տարիքային խմբերի և ՀՀ մարզերի:	**3. Չի ընդունվել:** Տե՛ս 1-ին կետի մեկնաբանությունը:
4. «Առողջապահություն» բաժնում կառավարվող վարակների հիվանդացության ցուցանիշները ներկայացնել բոլոր պատվաստումներով կանխարգելվող վարակների վերաբերյալ «Օրինակ՝ ջրծաղիկ, կատաղություն «տնային, վայրի» և	**4. Չի ընդունվել:** Տե՛ս 1-ին կետի մեկնաբանությունը:

ըստ ՀՀ մարզերի:	
5. «Առողջապահություն» բաժնում հիվանդացությունը չարորակ նորագոյացություններով՝ ըստ ցուցանիշների և տարիների, առաջարկվում է ներկայացնել ըստ ՀՀ մարզերի:	**5. Չի ընդունվել:** Տե՛ս 1-ին կետի մեկնաբանությունը:
6. «Առողջապահություն» բաժնում առաջարկվում է նաև ներառել բնակչության վարքագծային ռիսկի գործոնների տարածվածության վերաբերյալ տվյալներ՝ ծխախոտի օգտագործում, ալկոհոլի չարաշահում, անլիարժեք սննդակարգ, ֆիզիկական թերակտիվություն:	**6. Չի ընդունվել:** Տե՛ս 1-ին կետի մեկնաբանությունը:
7.Առաջարկվում է ոլորտին առնչվող բոլոր տեղեկատվությունը ներառել «Առողջապահություն» բաժնում, հետագայում գիտական նյութերի վերաբերյալ արագ և մատչելի հասանելիություն ապահովելու նպատակով:	**7. Ընդունվել է ի գիտություն:** Միաժամանակ, տեղեկացվում է, որ Արմստատը «Ժողովրդագրություն» բաժնի 511001 ծածկագրի ներքո կիրապարակի նաև հղում՝ ըստ մահվան պատճառների մահացության դեպքերի վերաբերյալ:
8. Առաջարկվում է «Առողջապահություն» բաժնում ներառել մահվան պատճառներն ըստ հիվանդությունների, բնակության վայրի, տարիքային խմբերի:	**8.Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն՝ «5.1.Ժողովրդագրություն» բաժնի 511001 ծածկագրի 4-րդ սյունյակում ավելացել է «մահացությունն ըստ մահվան պատճառների և տարիքային խմբերի» բառերը: Հարկ է նշել, որ մահվան պատճառների վերաբերյալ տեղեկությունների աղբյուրը՝

	Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության (ՔԿԱԳ) կողմից տնօրինվող Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ռեգիստրն է, որը Արմստատի համար ներկայում հանդիսանում է այդ թվում նշված ոլորտի տեղեկությունների վարչական ռեգիստր: Նշված վարչական ռեգիստրում ըստ մահվան պատճառների դասակարգման համար օգտագործվում է մահվան մասին բժշկական տեղեկանքներում արձանագրված համապատասխան ծածկագրերը (կոդերը): Վերոհիշյալ ռեգիստրում ձևավորված համապատասխան տեղեկությունների հիման վրա, Արմստատի կողմից արդեն իսկ մշակվում, արտադրվում և տարածվում են մահվան պատճառների՝ ըստ հիվանդությունների, հաշվառման վայրի (մարզերի և ք.Երևանի) և տարիքային խմբերի վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունը (տե՛ս օրինակ 1.Մահվան դեպքերն ըստ սեռի և տարիքային խմբերի, 2013-2023թթ., 2.Մահացությունն ըստ սեռի և մահվան հիմնական պատճառների, 2020-2023թթ, 3.Մահացությունն ըստ մահվան հիմնական պատճառների՝ ՀՀ մարզերի և ք.Երևանի

	կտրվածքով, 2019-2023թթ, «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2024» հրապարակման մեջ՝ https://armstat.am/file/article/demog_2024_5.pdf հղման ներքո՝ 92, 95-98, 100-111 էջերը): Ընդ որում, հարկ է նշել, որ քանզի այդ ցուցանիշները վերաբերում են բնակչության բնական շարժին, մասնավորապես՝ մահվան դեպքերին, վիճակագրական հրապարակումներում դրանք ներկայացվում են և նպատակահարմար է հետայսու ևս ներկայացնել «Ժողովրդագրություն» բաժնի ներքո:
112. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայկական հանրագիտարան» հրատարակչություն ՊՈԱԿ	
Չի ներկայացվել	
113. «Արմենպրես» լրատվական գործակալություն ՓԲԸ	
Չի ներկայացվել	
114. «Առկա» լրատվական գործակալություն	
Չի ներկայացվել	
115. «Արմինֆո» լրատվական գործակալություն	
Չի ներկայացվել	

116. «Մեդիամաքս» լրատվական ՍՊԸ	
Չի ներկայացվել	
117. «Նոյյան տապան» լրատվական-վերլուծական կենտրոն	
Չի ներկայացվել	
118. Երևանի քաղաքապետարան	**29.07.2025թ.** **01/92024-25**
Երևանի քաղաքապետարանը 2026 թվականի վիճակագրական ծրագրի նախագծի՝ վիճակագրական բովանդակության շուրջ առարկություններ և դիտակումներ չունի: Միաժամանակ՝ անհրաժեշտ եմ համարում շեշտել տեխնոլոգիական զարգացումներին և արդի հնարավորություններին համընթաց վիճակագրական համակարգի վերափոխման կարևորությունը բաց, ինտերակտիվ, հասանելի, մատչելի, դյուրին կիրառելի և վստահելի վիճակագրական տվյալներ և տեղեկատվություն տրամադրելու տեսակետից: Քաղաքային կառավարման ոլորտում տվյալահենք որոշումների կայացման և հանրությանը որակյալ և հաճախորդակենտրոն ծառայություններ մատուցելու համար Երևանի քաղաքապետարանն ինտենսիվորեն ներդնում է թվային նորարարական գործիքներ և տեղեկատվական կառավարման համակարգեր: Այս համատեքստում առաջարկում ենք տարեկան ծրագրերի շրջանակներում դիտարկել վիճակագրական համակարգերի արդիականացումը՝ ապահովելով վերջին տարիներին դինամիկ զարգացող և թվայնացվող վարչական տեղեկատվական շտեմարանների հետ սահուն (seamless) ինտեգրացիաների, ինքնաշխատ տվյալների փոխանակման, վիճակագրական տեղեկատվության և հրապարակումների մասով զարգացած ինտերակտիվ գործիքների ու	**Ընդունվել է ի գիտություն:** Տեխնոլոգիական զարգացումներին համընթաց վիճակագրական համակարգի արդիականացումը և բաց, ինտերակտիվ, մատչելի տվյալների տրամադրումը բացառիկ կարևորություն ունի: Ներկայացված առաջարկները լիովին համապատասխանում են Արմստատի ռազմավարական նպատակներին և կնպաստեն վիճակագրական համակարգի արդյունավետ և ժամանակակից զարգացմանը:

վերլուծական վահանակների կիրառության և այլ նորարար մոտեցումներ ներդնելու հետ կապված հարցերը:		
119. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան		**01.08.2025թ.** **01//04978-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-	
120. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարան		
Չի ներկայացվել		
121. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան		
Չի ներկայացվել		
122. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան		**29.07.2025թ.** **01//6323-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-	
123. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան		**25.07.2025թ.** **05/112,1/06328-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-	
124. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան		**26.06.2025թ.** **01/07/06052-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-	
125. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան		**25.07.2025թ.** **01//06528-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-	

126. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան	24.06.2025թ. 01/09/04492-2025
Ծրագրում ներառել տարածքային վիճակագրություն զբոսաշրջության ոլորտում, մասնավորապես՝ 1. Զբոսաշրջիկների շարժի վիճակագրություն՝ մարզերի բաժանմամբ, այդ թվում՝ ներգնա և արտագնա զբոսաշրջիկների թվաքանակ, գիշերումների քանակ, սեզոնայնություն:	**1. Չի ընդունվել:** Արտագնա զբոսաշրջիկների թվաքանակի, գիշերումների քանակի, սեզոնայնության վերաբերյալ վիճակագրության վարումը մարզերի բաժանմամբ հնարավոր չէ, քանզի խնդրո առարկա աշխատանքների իրականացումը պայմանավորված է վիճակագրությանը հատկացվող համապատասխան ֆինանսական, կադրային և այլ ռեսուրսային սահմանափակումներով:
2. Հյուրանոցային տնտեսությունների և խոշոր զբոսաշրջային կառույցների այցելուների քանակ՝ ըստ մարզերի: Առաջարկվող տվյալները էական նշանակություն ունեն մարզային մակարդակով զբոսաշրջային քաղաքականությունների մշակման, ենթակառուցվածքային ծրագրերի հիմնավորման և ներդրումային միջավայրի վերլուծության տեսանկյունից:	**2. Չի ընդունվել:** Ըստ մարզերի բաշխման հյուրանոցային տնտեսության օբյեկտներում տեղաբաշխված ներգնա զբոսաշրջիկների վերաբերյալ տեղեկությունը տարեկան կտրվածքով ամփոփվում ու հրապարակվում է «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով» վիճակագրական ժողովածուում, իսկ հյուրանոցների քանակի վերաբերյալ տեղեկությունը հրապարակվում է Արմստատի պաշտոնական կայքի՝ www.armstat.am,

	«Տվյալների բազաներ» հատվածի ArmStatBank.am ենթահատվածում հետևյալ հղման ներքո:
127. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարան	
Չի ներկայացվել	
128. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարան	**21.07.2025թ.** **01//03560-2025**
Դիտողություններ և առաջարկություններ չկան:	-
129. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի անդամ, Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների Հանրային խորհրդի անդամ Արտակ Մանուկյան	**22.10.2025թ.** **08.2-07/2890-25**
1. Ջերմոցային գազերի արտանետումների վերաբերյալ տեղեկատվությունը երկամյա հաճախականության է: Առաջարկում ենք հնարավորության դեպքում ավելացնել տվյալների հրապարակման հաճախականությունը:	**1.Չի ընդունվել:** Ըստ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջազգային համաձայնագրերից բխող պարտավորությունների՝ Հայաստանը պետք է ներկայացնի երկամյա թափանցիկության զեկույցներ և ջերմոցային գազերի գույքագրման հաշվետվություններ: Տվյալների աղբյուրը ՇՄՆ-ն է, որը ջերմոցային գազերի գույքագրումն իրականացնում է երկու տարին մեկ անգամ: Ըստ այդմ՝ տվյալների հրապարակման հաճախականությունը հնարավոր չէ ավելացնել:

2.Առաջարկում ենք հնարավորության դեպքում հրապարակել էլեկտրոմոբիլների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվություն:	**2. Ընդունվել է ի գիտություն:** Արմստատը ս.թ հոկտեմբերի 20-ին, թիվ ՎԿ/2-05/3743-2025 գրությամբ, խնդրո առարկա տեղեկությունը ստանալու նպատակով դիմել է ՆԳՆ-ին՝ որպես ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների՝ այդ թվում էլեկտրոմոբիլների, հաշվառումն իրականացնող և համապատասխան վարչական ռեգիստր վարող պետական լիազոր մարմին: Ստացված տեղեկությունը Արմստատը նախատեսում է հրապարակել «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի «Հետաքրքրաշարժ վիճակագրություն» հատվածում:
3.Պետական պարտքերի մասով, վարկերի մեջ որպես ենթատեսակ տրամադրել կանաչ վարկերի վերաբերյալ տվյալներ:	**3. Ընդունվել է ի գիտություն:** Խնդրո առարկա տեղեկությունների վերաբերյալ Արմստատը մասնագիտական պարզաբանումներ ստանալու նպատակով 24.10.2025թ.-ի թիվ ՎԿ/2-10/3812-2025 գրությամբ դիմել է ՖՆ-ին: Ըստ ՖՆ-ի 10.12.2025թ. թիվ 01/7-3/25878-2025 գրությամբ Արմստատին տրամադրված պարզաբանման՝ ներկայումս ՀՀ կառավարության կողմից ներգրավվող

	վարկերում «կանաչ» վարկերի նշագրում չի իրականացվում, սակայն ՖՆ-ն համապատասխան գործիքակազմի առկայության պարագայում պատրաստ է աջակցել «կանաչ» վարկերի նշագրման գործընթացին: Միաժամանակ, ՖՆ-ն տեղեկացնում է, որ «կանաչ տնտեսություն» քաղաքականության մասով պատասխանատու գերատեսչություն է հանդիսանում ՇՄՆ-ն: :
130. Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների Հանրային խորհրդի անդամ Աննա Ժամակոչյան	
Ակնկալում ենք նկատառումների հիման վրա նախագծում շոշափելի փոփոխություններ, որոնք անհրաժեշտ են փաստահենք սոցիալական քաղաքականությունների մշակման և ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից իրականացվող հետազոտության լիարժեք իմաստավորվածության տեսանկյունից:	**Ընդունվել է ի գիտություն:**

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ